

Տ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՀԱՅՈՑ Լ ԵԶՈՒ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Վ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՍԱԳԻՐՔ
4-րդ ԳԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԱՅԿ. ԽՈԶ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1988

Տ. ՇԱՀԲԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ
4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Խ. Հ.» տպարանի մեղքով տպրդել էն հետևյալ վրիպակները.

Եջ	Տ Խ Դ	Տ Կ Վ Ի Կ Ե	Պ Ե Թ Ե լ Ր Ի
26	1 վ.	արդեն հալվեց:	Ձյունն արդեն հալվեց:
26	2 վ.	Ա... տեղ կանաչում է	Ամեն տեղ կանաչում է
202	12 վ.	բա, ներկ. ժամանակ, հոգ- նանի	Բայ, ներկա ժամանակ, հոգնակի

Հայոց լեզու և քեր. ուղղագրութիւն



11-285459p

1. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Կարգացե՛ք ա՛յ և ձախ սյունակներում յեղած հետևյալ հոգվածները և ասացե՛ք՝ ի՞նչ տարբերություն կա նրանց միջև: Յերկրորդ սյունակում ԿՊՐ բառերն են փոխարինում Սուրիկը, Սուրիկին և ընկերներին բառերին:

Սուրիկը կարթով ձուկ
եր վորսում:

Սուրիկը հանկարծ ըն-
կավ գետը:

Ընկերներն ազատեցին
Սուրիկին:

Սուրիկը շնորհակալու-
թյուն հայտնեց ընկեր-
ներին:

Սուրիկը կարթով ձուկ
եր վորսում:

Նա հանկարծ ընկավ
գետը:

Ընկերներն ազատեցին
նրան:

Սուրիկը շնորհակալու-
թյուն հայտնեց նրանց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Արտադրեցե՛ք հետևյալ հոգվածը և կե-
տերի տեղը գրեցե՛ք՝ յես, դու, նա, մենք, դուք, նրանք:

... գրում եյի, ... կարդում եյիր ... նկարում եր:
... գրում եյինք ... կարդում եյիք ... նկարում եյին:

Նախադասության մեջ շատ անգամ գործածվում են՝ յես, դու, նա, մենք, դուք, նրանք բառերը: Այս բառերը փոխարինում են անձերի անուններին և կոչվում են անձնական դերանուններ:

Յես, մենք առաջին դեմքի դերանուններն են:
Դու, դուք յերկրորդ դեմքի դերանուններն են:
Նա, նրանք յերրորդ դեմքի դերանուններն են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Կարգացե՛ք հետեյալ հոգւածը և ձեր տետրակներում արտագրեցե՛ք յերկու անգամ: Մեկ անգամ դուրս ծածեցե՛ք յերկրորդ դեմքի դերանունները, իսկ մյուս անգամ՝ յերրորդ դեմքի դերանունները:

Յ ե գ ա կ ի ք ի վ

Յես սովորում եմ դպրոցում:
Իմ դասերը լավ եմ սովորում:
Ինձ նվերներ տվեց զիրեկցիան:
Ինձ ուղարկեցին հանգստյան տուն:
Ինձնից, գոհ են բոլորը:
Ինձնով պարծենում եմ եր զիրեկտորը:
Իմ մեջ մեծ յեռանդ ե առաջացնում այդ բոլորը:

Հ ն գ ն ա կ ի ք ի վ

Մենք սովորում ենք դպրոցում:
Մեր դասերը լավ ենք սովորում:
Մեզ նվերներ տվեց զիրեկցիան:
Մեզ ուղարկեցին հանգստյան տուն:
Մեզնից գոհ են բոլորը:
Մեզնով պարծենում եմ եր զիրեկտորը:
Մեզնում մեծ յեռանդ ե առաջացնում այդ բոլորը:

Գոյականների նման դերանուններն ել լինում են լեզակի և հոգնակի: Յեզակի անձերի անվան փոխարեն զրվող դերանունները լինում են յեզակի, իսկ հոգնակի անձերի անվան փոխարեն զրվող դերանունները լինում են հոգնակի:

Յեզակի յեն՝ յես, դու, նա:

Հոգնակի յեն՝ մեք, դուք, նրանք:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Յ ե գ ա կ ի ք ի վ

Ուղղական	յես	դու	նա
Սեռական	իմ	քո	նրա
Տրական	ինձ	քեզ	նրան
Հայցական	ինձ	քեզ	նրան
Բացառական	ինձնից	քեզնից	նրանից
Գործիական	ինձնով	քեզնով	նրանով
Ներգոյական	ինձնում	քեզնում	նրանում
կամ իմ մեջ կամ քո մեջ կամ նրա մեջ			

Հ ն գ ն ա կ ի ք ի վ

Սղղական	մենք	դուք	նրանք
Սեռական	մեր	ձեր	նրանց
Տրական	մեզ	ձեզ	նրանց
Հայցական	մեզ	ձեզ	նրանց
Բացառական	մեզնից	ձեզնից	նրանցից
Գործիական	մեզնով	ձեզնով	նրանցով
Ներգոյական	մեզնում	ձեզնում	նրանցում
կամ մեր մեջ կամ ձեր մեջ կամ նրանց մեջ			

Անձնական դերանունների տրական և հայցական հոլովներն իրար նման են թե յեզակիում և թե հոգնակիում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Համեմատեցե՛ք անձնական դերանունների հոլովները գոյականների հոլովների հետ և ասացե՛ք՝ անձնական դերանունների և գոյականների վրա հոլովներն իրար նման են իրենց վերջավորություններով:

	Դերա- նուն	Գոյական		Դերա- նուն	Գոյական
Ուղղ.	Յես	Քար	Ուղղ.	Մենք	Քարեր
Սեռ.	Իմ	Քարի	Սեռ.	Մեր	Քարերի
Տրակ.	Ինձ	Քարի	Տրակ.	Մեզ	Քարերի
Հայց.	Ինձ	Քար	Հայց.	Մեզ	Քարեր
Բաց.	Ինձնից	Քարից	Բաց.	Մեզնից	Քարերից
Գործ.	Ինձնով	Քարով	Գործ.	Մեզնով	Քարերով
Ներգ.	Ինձնում	Քարում	Ներգ.	Մեզնում	Քարերում
	կամ			կամ	
	իմ մեջ			մեր մեջ	

Անձնական դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովների վերջավորութունները նման են գոյականների նույն հոլովների վերջավորութուններին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Հետևյալ հոգվածն արտագրեցե՛ք, կետերի տեղը գրեցե՛ք առաջին գեմքի անձնական դերանունները՝ պահանջվող հոլովներով:

Յ ե գ ա կ ի

... գնում եյի դպրոց: Ճանապարհին ... գիրքը կորավ: Հանկարծ ... հանդիպեց ընկերուհիս, նա ... շատ եր սիրում և ... չեր ուզում հեռանալ: Նա ... պարծենում եր, վորովհետև ... տեսնում եր վորոշ արժանիքներ:

Հ ո գ ն ա կ ի

... գնում եյինք դպրոց: Ճանապարհին ... գրքերը կորան: Հանկարծ ... հանդիպեց ընկերուհիս, նա ... շատ եր սիրում և ... չեր ուզում հեռանալ: Նա ... պարծենում եր, վորովհետև ... տեսնում եր վորոշ արժանիքներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Կարդալ հետևյալ հոգվածը և անձնական դերանունների վրա նշանակել հոլովների առաջին տառերը:

Յես և ընկերս միշտ լինում եյինք մեր դիրեկտորի մոտ: Նա շատ հոգատար եր դեպի մեզ: Նա շատ անգամ մեզ հրավիրում եր իր մոտ և մեզնից պահանջում եր պատմել մեր կարգացած գրքերի բովանդակությունը: Նա մեզնում տեսնում եր վորոշ ընդունակություն և դրա համար միշտ պարծենում եր մեզնով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. Կազմեցե՛ք յոթ այնպիսի նախադասություններ, վորոնց մեջ անձնական դերանուններից մեկը գործածվի բոլոր հոլովներով, և գրեցե՛ք հոլովների կարգով, այնպես վոր դերանուններն ընկնեն մի շարքի վրա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8. Փակագծերում արված անձնական դերանունները գրեցե՛ք կետերի տեղը՝ պահանջված հոլովով:

... (յես), ... (դու) և ... (նա) գնահատականները գերազանց են ... (յես), ... (դու) և ... (նա) գրքեր նվիրեցին: ... (յես), ... (դու) և ... (նա) սիրում են բոլոր ուսուցիչները: ... (յես), ... (դու) և ... (նա) որինակ են վերցնում: ... (յես), ... (դու) և ... (նա) պարծենում են: ... (յես), ... (դու) և ... (նա) մեջ մեծ փոփոխություն ե կատարվե:

Որինակ՝ իմ, քո և նրա գնահատականները դերապանց են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9. Հետևյալ հոգվածն արտադրեցեք և ընդգծեցեք զերանուաները:

Մի՛ք փանդի քոչուցների բները

Սուրիկը վորոշել եր թռչունների ձվեր հա-
վաքել:

Անտառի ճանապարհին նա պատահեց Ռու-
բիկին:

Ռուբիկը ցանկացավ, վոր ինքն ել մասնակցի
այդ «արշավ»-ին:

Նա պատմեց, վոր ինքը ձու հավաքելու վար-
պետ ե:

— Յես ու դու միասին անտառը տալն ու
վրա կանենք,— ավելացրեց նա:— Ինքդ այդ լավ
գիտես:

Նրանք այսպես խոսելով հասան անտառ:

Հանկարծ լավեց անտառապահի ձայնը:

— Սպասեցեք, դուք դարձյալ թռչուններին
նեղացնելու յեք գնում: Յես յերեկ ձեզ չասացի՞,
վոր դուք թռչուններին հանգիստ թողնեք: Բացի
ոգուտից նրանք մեզ ի՞նչ վնաս են տվել: Թռչուն-
ները մեր բարեկամներն են, և նրանց ապահովու-
թյան համար մենք ինքներս պիտի շահագրգռված
լինենք: Իսկ յեթե նրանց ձվերն այսոր յես հա-
վաքեմ, վաղը՝ դու, մյուս օրը՝ նա, ապա կարճ ժա-
մանակից հետո անտառում այլևս թռչուն չենք
ունենա:

Յերեխաներն ամոթահար տուն վերադարձան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10. Արտադրեցեք հետևյալ նամակը և
ընդգծեցեք Դուք, Ձեք, Ձեր, Ձեզմից քաղաքավարական ձևերը:

Սիրելի ուսուցիչ

Ստացա Ձեր ուղարկած բացիկը: Դուք գրում
եք, վոր պետք ե լուրջ ուշադրություն դարձնել
դպրոցական պարապմունքների վրա: Շուտով յես
Ձեզ կուղարկեմ իմ գնահատականները, վորից
Դուք կիմանաք, թե վորչափով յես կատարում եմ
Ձեր խորհուրդները: Ձեզ բարևում են բոլոր դաս-
ընկերներս, վորոնք Ձեզնից քաղցր հիշողություն-
ներ ունեն:

Բարևներով Կորյուն Վոսկանյան

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11. Հետևյալ հատվածից ընտրեցեք անձ
նական զերանուաները և կազմեցեք նախադասություններ:

«Ուր ել գնաք, ականջ դրեք ժողովրդի սրտի
ձայնին,

Հաճախ սիրով նրան լսեք, միշտ ե անխառն
նրա գինին,

Յեւ պարտիզան խմբերը վողջ վարեք հզոր ձեր
գործի հետ,

Նրանց մեջ ե ուժը հողի, ով հսկաներ ամենագետ
թռեք, փոքր ամենուրեք տզրուկ ու նենգ շար
թշնամուն,

Վառեք արնոտ ցեղը նրա, մոխիրն ամեն տվեք
քամուն»...




Ասաց դյուցազն, ու սլացան ձիերն ամեն
հսկաների,

Դեպի հեռու զիրքերը նոր, դեպի բերդերն
 արնոտ ցարիս
 Ինքն ել թռավ նոր բանակով ու, յերբ կանցներ
 ստեպներից,
 Դեմը յելավ մի սուրհանդակ՝ փախած ցարիսն
 բանակից:
 — Մենք ել անհող, աղքատ մարդիկ, ցարը զոռով
 ե մեզ բերել,
 Հիմա գիտենք, թե դյուցազունն ում համար ե
 կովի յելել:
 Ձեր զենքերն են յեղան ու թուր, մենք բերել ենք
 զենք ու զրահ
 Հանձնվում ենք ձեր հավատին՝ կովի յելնենք
 ցարի վրա:
 Ասին նրանք, և Ստալին դյուցազն ուրախ ու լուռ
 խորհեց,
 Արևի պես նա ժպտալով նրանց մի ալ դրոշ տվեց,
 Զորքը նորից առաջ վարեց դեպի Լենին
 դյուցազնը մեծ:
 (Հ. Շիրազ)

Բ Ա Յ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12. Հետևյալ բառերը գրեցեք նկարների
 կարգով աջպես, վոր իմացվի, թե՛ ի՞նչ ե անում կամ ի՞նչ ե
 լինում ամեն մեկը:

Ցատկում ե, փորում ե, կոտորում ե, վազում ե,
 վառվում ե, յնում ե, փախչում ե, սղոցում ե,
 վարում ե:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13. Կատարած գործողություններով իմացե՞ք առարկաները և նրանց անունները գրեցե՞ք կետերի տեղը:

Վոչխարը մայրում է:	Վարդը բացվում է:
• • • • • մռնչում է:	• • • • • կանաչում է:
• • • • • բառաչում է:	• • • • • հոսում է:
• • • • • վրնջում է:	• • • • • փչում է:
• • • • • ճովողում է:	• • • • • վորտում է:
• • • • • դայլայլում է:	• • • • • ծագում է:

Կոլանտեսականը վարում է, ցանում է, հնձում է, մանրում է: • • • • կտրում է, տաշում է, ռանդում է, հզկում է: • • • • չափում է, ձևում է, կարում է, արդուկում է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14. Արտագրեցե՞ք և ընդգծեցե՞ք այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե ի՞նչ են անում առարկաները: Նրանց մոտ փակագծի մեջ գրեցե՞ք և հարցերը:

Առյուծը մռնչում է: Գայլը վռնում է: Խոզը կռնչում է: Արագիլը կափկափում է: Սոխակը դայլայլում է: Սարյակը ճովողում է: Բուն վայում է: Կռունկը կռկռում է: Կաշաղակը կչկչում է: Ծնճողուկը ճովողում է: Արջը մրթմրթում է:

Որինակ՝ Առյուծը (ի՞նչ է անում) մռնչում է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15. Արտագրեցե՞ք հետևյալ նախադասությունները և կետերի տեղը գրե՞ք այնպիսի բառեր, վորոնք ցույց տան, թե ի՞նչ են լինում առարկաները:

Տերեր գեղնում է: Զուրը • • • • Սառույցը • • • • Ծառը • • • • Ռումբը • • • • Գետը • • • • Պտուղը • • • • Ծաղիկը • • • • Վառարանը • • • •

Այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե առարկան ի՞նչ է անում կամ ի՞նչ է լինում, կոչվում են բայ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16. Արտագրեցե՞ք հետևյալ վոտանավորը և ընդգծեցե՞ք բայերը:

Լ ՈՒՍԻՆԸ

Գիշերվա մթնում	Յեվ նա արտերին
Արտերն են ծփում,	Ասում է կարծես՝
Լուսինը վերից	Կգա առավոտ,
Ժպտում է նորից:	Կշողա արև,
Շողում է կրկին	Կայցելեն ձեզ մոտ
Իեմբով ժպտերես	Տրակտոր ու կոմբայն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17. Հոտում են, վազում են, քափվում են բայերը գրե՞ք կետերի տեղը համապատասխան կերպով:

Առունները փողոցներով	• • •
Առունները ջրվեժներից	• • •
Առունները ձորերով	• • •

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18. Ինքներդ կաղմեցե՞ք 5 նախադասություն, գործածելով այնպիսի բայեր, վորոնք ցույց տան առարկայի յեղելությունը, և 5 նախադասություն, վորոնք ցույց տան առարկայի գործողությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19. Հետևյալ վոտանավորից արտադրեցեք բայերը:

Կապույտ ծովն ե արեկոծվում,
Յե՛վ շնչում են հովերը զով,
Իսկ մենք լողում ենք շատ հեռու,
Սափառնում ենք նոր բարձունքով:
Գնում ենք մենք առաջ անահ,
Ինչպես արևը՝ յերկնքում,
Կառուցում ենք մարտեն, դոմնա,
Մեծ զավոզներ ենք վեր ձգում:

Յերկրից յերկիր, ամենուրեք
Լողում ե մեր յերգն անեղբերք—
Լողում ե յերգ բոլշևիկի,
Մըրկահավը գալիքի:

(Յաճկա Կուպալա)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20. Հետևյալ հոգվածի կետերի տեղը դրեք համապատասխան բայերը:

Հյուսնը, տախտորիսը յե՛վ առակերսը

Հյուսնը տրակտորիստին ասում ե՛ «Յես . . . տախտակը, դու . . . արտը, իսկ նա (աշակերտը) . . . դասը»:

Աշակերտը հյուսնին ասում ե՛ «Յես . . . դասը, դու . . . տախտակը, իսկ նա (տրակտորիստը) . . . արտը»:

Տրակտորիստն աշակերտին ասում ե՛ «Յես . . . արտը, դու . . . դասը, իսկ նա (հյուսնը) . . . տախտակը»:

Յ Ո Ւ Յ Ո Ւ Մ

Յես սղոցում եմ: Յես սովորում եմ: Յես վարում եմ:
Դու սղոցում ես: Դու սովորում ես: Դու վարում ես:
Նա սղոցում ե: Նա սովորում ե: Նա վարում ե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21. Արտագրեցեք՝ գրում եմ և կարդում եմ բայերի փոխարեն գործածելով սովորում եմ և աշխատում եմ բայերը:

Յ ե գ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
Յես գրում եմ	Մենք գրում ենք
Դու գրում ես	Դուք գրում եք
Նա գրում ե	Նրանք գրում են
Յես կարդում եմ	Մենք կարդում ենք
Դու կարդում ես	Դուք կարդում եք
Նա կարդում ե	Նրանք կարդում են

Յերբ բայը համաձայնում ե անձնական դերանունների առաջին, յերկրորդ և յերրորդ զեմքերի հետ (յես, դու, նա, մե՛նք, դուք, նրա՛նք) նրա վերջավորությունները փոփոխվում են:

Բայի փոփոխումն ըստ զեմքերի, թվերի և ժամանակների կոչվում ե խոնարհում:

ՅԵՆԹԱԿԱՅԻ ՈՒ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՎՈՎ ՈՒ ԴԵՄԴՈՎ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22. Արտագրելիս կետերի տեղը զրեք յենթակաները:

... զրուամ եմ:	... կարգում եմ:
... զրուամ ես:	... կարգում ես:
... զրուամ ե:	... կարգում ե:
... զրուամ ենք:	... կարգում ենք:
... զրուամ եք:	... կարգում եք:
... զրուամ են:	... կարգում են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23. Արտագրելիս կետերի տեղը զրեք ստորոգյալները:

(Կտրել, փազել):

Յես	...	Յես	...
Դու	...	Դու	...
Նա	...	Նա	...
Մենք	...	Մենք	...
Դուք	...	Դուք	...
Նրանք	...	Նրանք	...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24. Արտագրելիս կետերի տեղը զրեք խաղում եմ բալը՝ համապատասխան վերջավորություններով:

Յես ... (խնչ եմ անում)	Մենք ... (խնչ ենք անում)
Դու ... (խնչ ես անում)	Դուք ... (խնչ եք անում)
Նա ... (խնչ ե անում)	Նրանք ... (խնչ են անում)

Որինակ՝ Յես խաղում եմ, դու ... և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25. Հետևյալ հոգվածի մեջ յես, դու, մա անձնական գերանունները փոխարինեցեք մեմ, դու, մա մեմ գերանուններով և ընդգծեցեք բայերի վերջավորությունները:

Յես գնացի դպրոց, դու գնացիր տուն, իսկ նա գնաց կինո: Յես դպրոցից յեկա տուն, դու կինոյից յեկար դպրոց, իսկ նա կինոյից յեկավ տուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26. Հետևյալ նախադասություններն արտագրեցեք՝ մեմ, դու, մա մեմ գերանունները փոխելով յես, դու, մա գերանուններով:

Մենք աշխատում ենք հանդում:
Դուք աշխատում եք գործարանում:
Նրանք աշխատում են հանքերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27. Հետևյալ նախադասությունների ստորոգյալները փոխեցեք այնպես, Վոր նրանց յենթակաները դառնան հոգնակի:

Դարբինը շիկացնում ե, կտում ե և կտիում ե:
Հյուանը կտրում ե, հղկում ե և շինում ե:
Կոմբայնը հնձում ե, մանրում ե և զտում ե:

Ստորագրելով թվով և գեմքով համաձայնում ե յենթակալի հետ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28. Հետևյալ հոգվածն արտագրեցեք յերկու անգամ՝ առաջին անգամ յես յենթական փոխարինեցեք դու յենթակայով, իսկ յերկրորդ անգամ՝ դու յենթական մա յենթակայով:

ԻՆՉՊԵՍ ԵՄ ՅԵՍ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՈՐՍ

Առավոտյան յես արթնանում եմ, հագնվում, լվացվում, սանրվում, ապա նախաճաշում եմ և զրբերս վերցրած՝ գնում եմ դպրոց: Դպրոցում

լում եմ ուսուցիչներին, ակտիվ կերպով մասնակցում եմ դպրոցական պարապմունքներին:

Դասերից հետո մի ժամով գնում եմ ընթերցարան, կարդում եմ և վերադառնում եմ տուն՝ ցերեկվա ժամը յերկուսին: Ժամը յերեքին ճաշում եմ, մի ժամ հանգստանում եմ, փորից հետո գնում եմ զբոսանքի: Զբոսանքից հետո գնում եմ պիոներական ջոկատի պարապմունքներին: Յերեկոյան նորից պատրաստում եմ դասերս, ընթրում եմ և քնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29. Շղագրով ապված յենթականների տեղ գրեցեք փակագծերում յեղած բառերը և բայերը փոփոխեցեք ինչպես հարկավոր է:

Դու սիրում ես լողալ (յերեսանեոր): Ակնորները ձուկ են բռնում (մենք): Յերեսաները մարմնամարզությամբ են զբաղվում (դուք): Ձիեր հոգնածությունից ծանր են շնչում (դու): Աւակ՝ rslներ վաղ առավոտյան դպրոց են գնում (նա): Բանվորներն առավոտյան աշխատանքի լեն գնում (յես): Ուսանողները դպրոցում սովորում են (դու): Կոլսնեռականները դաշտում աշխատում են (նա): Յես այսոր քաղաք եմ գնալու (ուսուցիչները): Պիոներները լագեր են գնում (նա): Հովիվները սարն են բարձրանում (դու): Աղջիկները ծաղիկ են հավաքում (նա): Տղաները խաղում են (յես): Վարպետները շարում են (դու):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30. Հետևյալ հոգվածից ջոկեցեք բայերը և վերջեցեք նրանց թիվն ու դեմքը:

Որինակ՝ սխալվեց — յեղակի թիվ, 3-րդ դեմք:

Ծերունի հայրս սխալվեց: Հետագայում նա համարյա թե նույնն էր ասում, ինչ փոր յես եմ ասում հիմա, փորովհետեւ զգաց, փոր ինքն ափելի բարձր, ափելի ուժեղ ե սարից:

— Մենք և նրանք, փոր գալիս եյին մյուս կողմից, հանդիպեցինք իրար լեռան մեջ, հորս մահից յերեք ամիս հետո: Դա մի խենթ որ էր: Ո՛հ, յերեք ամենք լսեցինք այնտեղ, գետնի տակ, մթան մեջ, մյուսների աշխատանքի աղմուկը, գետնի տակ մեզ ընդառաջող մարդկանց աղմուկը, — յերեկայում եք, թե ինչ պիտի զգայինք մենք: Չե՞ փոր յերկիրը կարող էր իր ահագին ծանրության տակ ճխել մեզ, փոքրիկ մարդկանցս, բոլորին միանգամից:

— Շատ որեր լսում եյինք այդ զարկերը, փորոնք խուլ թնդյուններ եյին անում՝ որն-որին նրանք փորոշակի եյին դառնում ու պարզ լսվում: Հաղթողների հրճվանքը տիրեց մեզ, մենք աշխատում եյինք առանց հոգնելու: Ու ամենքս այնքան սիրալիր ու բարի եյինք դարձել, ինչպես միայն յերեքայնեք ու բարի եյինք դարձել, ինչպես միայն յերեքայնեք են լինում: Ա՛խ, փոր գիտենայիք՝ փորքան ուժեղ, փորքան անտանելի բան է լինում այն ցանկությունը, փորով ուզում ես հանդիպել մարդու՝ մթության մեջ, գետնի տակ, ուր խլուղի պես փորփրում եյիր յերկար ամիսներ:

Պատմողը վոգնորվեց, մոտեցավ լսողին, կանգնեց ուղղակի նրա առջև և, նայելով խոսակցի աչքերին, շարունակեց հանգարտ ու ցնծալին:

(Մ. Կարկի)

ԲԱՅԻ ՆԵՐԿԱՆ, ԱՆՑՅԱԼ ՅԵՎ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31. Ձեր տնտեսական հետևյալ որի-
նակի ձևով աճեք խաղալ, պարել և յերգել բայերի յերեք ժա-
մանակները:

Ն ե Ր Կ ա	Ա ն ց յ ա լ	Ա . պ ա ո ն ի
Յես կարդում եմ	Յես կարդացի	Յես կարդալու յեմ
Յես գնում եմ	Յես գնացի	Յես գնալու յեմ
Յես հագնվում եմ	Յես հագնվեցի	Յես հագնվելու յեմ

Բայերը կարող են ունենալ ներկա, անցյալ և
ապառնի ժամանակների ձևեր:

Ներկա ժամանակը ցույց է տալիս, վոր գործու-
ղությունը կատարվում է հիմա, այսինքն խոսելու
ընթացին:

Անցյալ ժամանակը ցույց է տալիս, վոր գոր-
ծողությունը կատարվել է անցյալում, այսինքն խո-
սելու ժամանակից առաջ:

Ապառնի ժամանակը ցույց է տալիս, վոր գոր-
ծողությունը կատարվելու չէ հետո, այսինքն խոսելու
ժամանակից հետո:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32. Հետևյալ բայերից յուրաքանչյուրը
գրեցեք անցյալ, ապառնի ժամանակներով և առաջին դեմքով
որինակ՝ կարում եմ, կարեցի, կարելու յեմ:

Ն ե Ր Կ ա	Ա ն ց յ ա լ	Ա . պ ա ո ն ի
Կառուցում եմ		
Սովորում եմ		
Հետաքրքրվում եմ		
Ոժանդակում եմ		

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33. Հետևյալ ձևով խոնարհեցե՛ք՝ սովո-
րել, պատմել և նկարել բայերը:

ՆԵՐԿԱ ՔԱՄԱՆԱԿ

Յ ե գ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
Խաղում եմ	Խաղում եմք
Խաղում ես	Խաղում եք
Խաղում ե	Խաղում են

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34. Հետևյալ ձևով խոնարհեցե՛ք պատմել,
նկարել և ռադադել բայերը:

ԱՆՑՅԱԼ ՔԱՄԱՆԱԿ

Յ ե գ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
Խաղացի	Խաղացինք
Խաղացիր	Խաղացիք
Խաղաց	Խաղացին

Խաղացել եմ	Խաղացել ենք
Խաղացել ես	Խաղացել եք
Խաղացել ե	Խաղացել են

Խաղացած եմ
Խաղացած ես
Խաղացած ե

Խաղացած ենք
Խաղացած եք
Խաղացած են

Խաղում եյի
Խաղում եյիր
Խաղում եր

Խաղում եյինք
Խաղում եյիք
Խաղում եյին

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35. Հետևյալ ձևով խոնարհեցեք նկատել,
պատճախել և սղոցել բայերը:

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Յ Ե Ղ Ա Կ Ի

Հ Ո Ղ Ն Ա Կ Ի

Խաղալու յեմ
Խաղալու յես
Խաղալու յե

Խաղալու յենք
Խաղալու յեք
Խաղալու յեն

Կխաղամ
Կխաղաս
Կխաղա

Կխաղանք
Կխաղաք
Կխաղան

Պիտի խաղամ
Պիտի խաղաս
Պիտի խաղա

Պիտի խաղանք
Պիտի խաղաք
Պիտի խաղան

Խաղամ
Խաղաս
Խաղա

Խաղանք
Խաղաք
Խաղան

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36. Հետևյալ հոգվածից ընտրեցեք բայերը
և գրեցեք յերեք սյունակներում ըստ ժամանակների:

Սուրիկը սենյակը մաքրեց և նստեց ու սկսեց
գիրք կարդալ: Ներս մտալ Սուրիկի ընկերը՝ Սաշան,
և ասաց. «Դրսում յերեխաները ձնագնդի յեն խա-
ղում և չմուշկներով սղոցում են»: Նրանք ել գնացին
և մասնակցեցին խաղին:

Նրանք ասացին. «Վաղը նորից գալու յենք,
նորից խաղալու և ուրախանալու յենք»: Յերեխա-
ները շատ ուրախացան, շարքի կանգնեցին և վերա-
դարձան դպրոց: Յես ու Յերվանդն անհամբեր սպա-
սում ենք վաղվան: Մենք ել գնալու յենք: Դուք
ուզում եք գալ: Յեթե կգաք, այժմվանից պիտի
պատրաստվեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37. Հետևյալ վոտանալուրից ջոկեցեք բա-
յերը և նրանց դիմաց գրեցեք թիվը, դեմքը և ժամանակը:

Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Մըթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դրեց կրակին,
նորից բարեց իր յերկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել զոնաղին:

Ու նստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստուկթյամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն ե թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը:

Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Ծվում, ծրկլթում խավարի միջում,
«Վորբն» ե յեղբորը կանչում ցավալուր,
Բուն ե իր գաժան վայր կուրնչում:

Ու վողջ միասին մի խորունկ թախիծ,
 Մի մուժ գարգանդ են գիշերին տալի...
 Ահա տարածվեց հեռու ծըմակից
 Յեւ ձիգ վռնոցը սովատանջ գիլի:
 (Հ. Թ.)

Որինակ՝ մթնեց — անցյալ ժամանակ, յեղակի
 թիվ, յերրորդ գեմք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38. Ինքներդ կազմեցեք յերեք նախադաս-
 սություն ներկա ժամանակով, յերեք նախադասություն անցյալ
 ժամանակով, յերեք նախադասություն ապառնի ժամանակով:

Ձեր կազմած նախադասությունների մեջ գոր-
 ծածեցեք հետևյալ բայերը՝ կրել, կարել, առել, վա-
 գել, գնալ, խաղալ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39. Հետևյալ ձևով խոնարհեցեք սովորել,
 նկարել, պատմել, կարդալ բայերը:

Ն ե Ր Կ ա	Ա ն ց յ ա լ	Ա պ ա ո ն ի
Յեա գրում եմ	Յեա գրեցի	Յեա գրելու յեմ
Դու գրում ես	Դու գրեցիր	Դու գրելու յես
Նա գրում է	Նա գրեց	Նա գրելու լի
Մենք գրում ենք	Մենք գրեցինք	Մենք գրելու յենք
Դուք գրում եք	Դուք գրեցիք	Դուք գրելու յեք
Նրանք գրում են	Նրանք գրեցին	Նրանք գրելու յեն
Դու գրիր	Յեա գրել եմ	Յեա կգրեմ
Դու՞ մի գրիր	Դու գրել ես	Դու կգրես
Դուք գրեք	Նա գրել է	Նա կգրի
Դուք մի գրեք	Մենք գրել ենք	Մենք կգրենք
	Դուք գրել եք	Դուք կգրեք
	Նրանք գրել են	Նրանք կգրեն

Ն ե Ր Կ ա	Ա ն ց յ ա լ	Ա պ ա ո ն ի
Յեա գրած եմ	Յեա գրեմ	Յեա պիտի գրեմ
Դու գրած ես	Դու գրես	Դու պիտի գրես
Նա գրած է	Նա գրի	Նա պիտի գրի
Մենք գրած ենք	Մենք գրենք	Մենք պիտի գրենք
Դուք գրած եք	Դուք գրեք	Դուք պիտի գրեք
Նրանք գրած են	Նրանք գրեն	Նրանք պիտի գրեն
Յեա գրում էյի	Յեա պիտի գրեմ	Յեա պիտի գրեմ
Դու գրում էյիր	Դու պիտի գրես	Դու պիտի գրես
Նա գրում էր	Նա պիտի գրի	Նա պիտի գրի
Մենք գրում էյինք	Մենք պիտի գրենք	Մենք պիտի գրենք
Դուք գրում էյիք	Դուք պիտի գրեք	Դուք պիտի գրեք
Նրանք գրում էյին	Նրանք պիտի գրեն	Նրանք պիտի գրեն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40. Հետևյալ հատվածից ջոկեցեք բայերը՝ փո-
 խելով նրանց թիվը և ժամանակը:

Որինակ՝ ծագում եմ. — ծագեցին կամ ծագելու
 յեն:

Ծագում եմ մանուկ արևը դարնան
 Կովկաս լեռների ձյունի պատնեշից,
 Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
 Զմրան անվրդով քնի մշուշից:
 Ահա Լարվարի վիթխարի ուսին
 Բազմում է արփին թարմացած ուժով,
 Սարեր ու ձորեր իրար յերեսին
 Նայում են, ժպտում ամպի մշուշով...
 Վերջին ձյուններն ել արդեն հալ ընկան,
 Արտասովեց իսկույն լեռների հսկան.
 Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,
 Ամեն մի թփից բլբուլ է խոսում:

(Վ. Մխաթյան)

3. ԲԱՅԻ ԺԽՏԱՆԱՆ ՁԵՎԸ

Դ ր ա կ ա ն

Ժ խ ս ա կ ա ն

արդեն հալվեց:	Ձյունը դեռ չի հալվել:
Առան տեղ կանաչում է	Խոտը դեռ չի կանաչել:
խոտը:	
Ծառերը ծաղկում են:	Ծառերը չեն ծաղկել:
Ծաղիկները բացվում են:	Ծաղիկները չեն բացվել:
Յերգում են թռչունները:	Թռչունները չեն յերգում:
Գարունն արդեն յեկել է:	Գարունը դեռ չի յեկել:

Ն ե ր կ ա	
Դ ր ա կ ա ն	Ժ խ տ ա կ ա ն
կարգում եմ	Ձեմ կարգում
կարգում ես	Ձես կարգում
կարգում է	Ձի կարգում
կարգում ենք	Ձենք կարգում
կարգում եք	Ձեք կարգում
կարգում են	Ձեն կարգում

Ա ն ց յ ա լ	
Դ ր ա կ ա ն	Ժ խ տ ա կ ա ն
կարգացի	Ձկարգացի
կարգացիր	Ձկարգացիր
կարգաց	Ձկարգաց
կարգացինք	Ձկարգացինք
կարգացիք	Ձկա րացիք
կարգացին	Ձկարգացին

Ա պ ա ո ն ի

Դ ր ա կ ա ն	Ժ խ տ ա կ ա ն
կարգալու յեմ	Ձեմ կարգալու
կարգալու յես	Ձես կարգալու
կարգալու յե	Ձի կարգալու
կարգալու յենք	Ձենք կարգալու
կարգալու յեք	Ձեք կարգալու
կարգալու յեն	Ձեն կարգալու

Ժխտական մասնիկը (չ) գրվում է բային կից: Բայերը ժխտական ձեվով խոնարհելու ժամանակ ոժանդակ բալը (եմ, ես, է, ենք, եք, են, ելի, ելիք, եր, ելինք, ելիք, ելին) առաջ է ընկնում և իր սկզբից ունենում է չ ժխտական մասնիկը:

Յեզակի յերրորդ դեմքի է ոժանդակ բալը ժխտական ձևի խոնարհման ժամանակ փոխվում է ի—ի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41. Արտագրեցեք հետևյալ հոգվածը և ամեն մի բայի առաջ դրեք չ ժխտական մասնիկը և ասացե՛ք՝ կհամապատասխանի՞ արդյոք պատմվածքի բովանդակությունը «Ամառ» վերնագրին:

Ա Մ Ա Ռ

Արևը խանձում է, հունձը հասունանում է, խոտը հնձվում է: Խոտհարքներում գերանդիները շաշում են: Կոլտնտեսականների անասունները սարն են բարձրանում: Լեռները կանաչում են, այգիներում խաղողը հասունանում է: Յերեխաները լողանում են գետերում ու լճերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42. Ինքներդ կազմեցեք հինգ նախադաս-
սություն ժխտական բայով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43. Հետևյալ հոգևածից և քառյակներից
չոկեցեք ժխտական բայերը:

Յերվանդն այսօր իր դասերը չեր սովորել, դրա
համար դպրոց չգնաց: Նա արդեն չեր ուզում գնալ,
վորովհետև դասագրքեր չունի և չի ել ցանկանում
գնել: Նա չի ուզում սովորել և կանոնավոր չի հաճա-
խում դպրոց: Հարկավոր է դաստիարակչական մի-
ջոցներ ձեռք առնել, վորպեսզի նա չխուսափի սո-
վորելուց:

— Չելավ, եդ չելավ,
Վեր չի գցել դեռ,
Մոսին թոլ ելավ—
Խողապարկուկ եր...

(Հ. Թ.)

Ինձ չես լսում,
Ձես ափսոսում,
Ել չես ասում՝
Ինչ կլնեմ յես...

(Հ. Թ.)

Ել չեմ սիրի յես, յերբ դու չես ուզում,
Ել չեմ կանչիլ յես նրան յերազում...
Ինձ մի սպանիր, դամեդ տար հեռու...
Քու քույրը չեմ յես... Իմ Մոսին չեմ դու...

(Հ. Թ.)

4. ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՎԸ

- | | |
|---|---------------------------------------|
| 1. Ոժանդակում ես ինձ: | 1. Ոժանդակիր ինձ: |
| 2. Ոժանդակում եք ինձ: | 2. Ոժանդակեցեք ինձ: |
| 3. Պատրաստում ես քո
դասերը: | 3. Պատրաստիր քո
դասերը: |
| 4. Պատրաստում եք ձեր
դասերը: | 4. Պատրաստեցեք ձեր
դասերը: |
| 5. Գնում ես աշխատանքի: | 5. Գնան աշխատանքի: |
| 6. Գնում եք աշխա-
տանքի: | 6. Գնացեք աշխատան-
քի: |
| 7. Կարդում ես գեղար-
վեստական գրքեր: | 7. Կարդան գեղարվես-
տական գրքեր: |
| 8. Կարդում եք գեղար-
վեստական գրքեր: | 8. Կարդացեք գեղար-
վեստական գրքեր: |
| 9. Նստում ես բազկա-
թոռին: | 9. Նստիր բազկաթո-
ռին: |
| 10. Նստում եք բազկա-
թոռին: | 10. Նստեցեք բազկա-
թոռին: |

Բալի աչն ձեր, վոր ցույց է տալիս, թե խոսողն
իր խոսակցին հրամայում, խնդրում կամ խորհուրդ
է տալիս՝ մի բան անել կամ լինել, կոչվում է
հրամայական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44. Հետևյալ ձևով խոսարհեցեք վազել,
խաղալ, գնալ, խոսել բայերը:

Դ ր ա կ ա ն ձ ե վ	Հ ր ա մ ա յ ա կ ա ն ձ ե վ
Յես կարդում եմ	(Դու) (կարդան)
Դու կարդում ես	
Նա կարդում է	
Մենք կարդում ենք	
Դուք կարդում եք	(Դուք) կարդացեք
Նրանք կարդում են	

Բայի հրամայական ձևն ունի միայն լերկորդ
դեմք՝ լեզակի և հոգնակի թվերով: Հրամայական
ձեվի վերջին ձայնավորի վրա շեշտ է դրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45. Հետևյալ պարբերություններն ար-
տադրելիս ընտրեցե՛ք բայերի հրամայական ձևերը և կազմեցե՛ք
ինքնուրույն նախադասություններ:

Դավիթն ել անա սարի գագաթին
Կանգնած գոռում է վիշապի նման.

— Ով քնած եք՝ արթուն կացե՛ք,

Ով արթուն եք՝ յեկե՛ք, կեցե՛ք,

Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,

Զենք եք կապել, ձի թամբեցե՛ք,

Զի յեք թամբել, յեկե՛ք, հեծե՛ք,

Հետո չասե՛ք, թե մենք քնած —

Դավիթ գող-գող լեկավ, գնաց:

(Հ. Թ.)

ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46. Կարդացե՛ք և ասացե՛ք՝ Խնչ տարե-
լություն կա գծի աջ և ձախ կողմում տպված նախադասու-
թյունների միջև:

Գնահ զբոսանքի:
Նստիր և կարդա:
Խաղա ու զբոսնիր:

Մի գնա զբոսանքի:
Մի նստիր և մի կարդա:
Մի խաղա ու մի զբոսնի:

Բայի հրամայական ձևի ժխտականը կազմվում է մի
մասնիկով (փոխանակ չ մասնիկի) և կոչվում է ար-
գելական հրամայական:

Բայի հրամայական ձևի շեշտը դրվում է մի՛
արգելականի վրա, յեթե բայը գործածված է արգե-
լական հրամայականով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47. Արտադրեցե՛ք և զրե՛ք հրամայականու-
թի շեշտը համապատասխան տեղերում:

Առավոտը շուտ վեր կաց, հագնվիր լվացվիր,
նախաճաշիր և գնա դպրոց: Դասի զանգը տալուն
պես մտիր դասարան և նստիր տեղդ: Ուշագորու-
թյամբ լսիր ուսուցչին և կատարիր նրա հա՛մ ձեա-
րարությունները: Դասամիջոցներին մի մնա դա-
սարանում, մի վազվզիր միջանցքում, մի խանդա-
րիր ընկերներիդ խաղերին, ընդհակառակը, մաքուր
ողի մեջ դու ինքդ կազմակերպիր կուլտուրական
խաղեր: Դասերից մի ուշանա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48. Արտադրեցե՛ք հետևյալ հոգվածը՝ բա-
յերի յեղակի թիվը հոգնակիի վերածելով: Հրամայականի վրա
զրե՛ք շեշտ:

Յեղիր հարվածային, պահպանիր պետական
գույքը, հաճախիր ակումբը և կարգա գեղարվեստա-
կան գրքեր: Ունեցիր քո որվա ռեժիմը և խիստ
կերպով պահպանիր նրա կանոնները: Ժամանակին
քնիր և ժամանակին վեր կաց: Ամեն առավոտ մաս-
նակցիր լիցքային մարզանքներին: Ակտիվ կերպով
մասնակցիր հասարակական աշխատանքներին: Ժա-
մանակին կատարիր քո բոլոր պարտականու-
թյունները: Այսորվա գործը վաղվան մի հետաձգիր: Աշ-
խատանքը կատարիր մաքուր ու խնամքով: Յերը
աշխատանքի կնստես, աշխատիր վերջացնել գործդ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49. Ինքներդ կազմեցե՛ք 5 նախադասու-
թյուն հրամայական և 5 նախադասություն արգելական ձևի
բայերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50. Հետևյալ վոտանավորից ջոկեցեք հրա-
մայական ձևի բայերը և վորոշեցեք նրանց դեմքն ու թիվը:

Ե՛յ, հսկեցեք ի՞նչ եք քնում,
Քաջ զինվորներ թաթուղի.
Ո՞վ ե, տեսեք, տանջվում մթնում,
Քուն չի աչքին մոտ գալի:

Զլինի՞ թե հաղթահարված,
Ճարը հատած թշնամին
Դավ ե գնում մութն ու մեռած
Կես գիշերվա ես ժամին:

Վեր կացեք, վեր, ամբողջ գիշեր
Մարդ ե գնում ու գալի,
Հե՛յ, զարթնեցեք, առյուծ քաջեր,
Պահապաններ թաթուղի:

Վեր կացեք, վեր, հարբեցրել ե
Իր հաղթական հյուրերին,
Բաց ե անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին:

Դավ... դավ... յելե՛ք... կոչնակ...
պահնակ...
Ձենք առեք շո՛ւտ... ձի հեծե՛ք, ձի...
Ճոնչում են, զղրդում են
Դարպասները յերկաթի...
(Հ. Թ.)

Որինակ՝ Հսկեցեք — հոգնակի թիվ, յերկրորդ
դեմք:

5. ԲԱՅԻ ԱՆՈՐՈՇ ՁԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51. Հետևյալ նախադասություններից ընտ-
րեցեք և արտագրեցեք այն բառերը, վորոնք պատասխանում
են ի՞նչ անել և ի՞նչ լինել հարցերին:

Լինել մաքրասեր:
Դառնալ հարվածային:
Հաջորդ աշխատանքների համար պատրաստվել
ժամանակին:
Բարձրացնել աշխատանքի արտադրողականու-
թյունը:
Պահպանել կարգալու առողջապահական կանոն-
ները:
Պառկած չկարդար:
Աղոտ լույսի տակ չգրել:
Դրավոր աշխատանքները կատարել թարմ
ժամանակ:
Յուրաքանչյուր ժամ աշխատելիս 15 րոպե
դադար տալ:
Դառնալ ոչինակելի աշակերտ:

Բայի այն ձևը, վորը պատասխանում ե ի՞նչ անել
կամ ի՞նչ լինել հարցերին, կոչվում ե բայի անորոշ
ձև:

Բայի անորոշ ձևն ունենում ե ել կամ ալ վեր-
ջավորությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52. Հետևյալ նախադասությունների բա-
յերն անորոշ ձևի վերածելով՝ արտաբերեցեք յերկրորդ սյունա-
կում դեմ դեմաց:

1. Գնա դպրոց
2. Լսիր ուսուցչին
3. Պատրաստիր դասերդ
4. Մասնակցիր աշխատանքներին
5. Դարձիր հարվածային
6. Յենթարկվիր կարգ ու կանոնին

1. Գնալ դպրոց
2.
3.
4.
5.
6.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53. Հետևյալ նախադասություններն արտադրելիս կետերի տեղը զրեցեք փակագծերում արված հարցերին պատասխանող բայերն իրենց անորոշ ձևով:

1. Գրիշան ուշանում է դասից, չի կարելի..... (ի՞նչ անել):

2. Սուրիկը դասերը չի սովորում, պետք է..... (ի՞նչ անել):

3. Սեզան ձեռքերը միշտ թանաքոտում է, հարկավոր է (ի՞նչ անել):

4. Յերվանդը կարգապահ չէ, պետք է (ի՞նչ լինել):

5. Սաշան ժամանակին չի հագնվում, անհրաժեշտ է (ի՞նչ անել):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54. Ինքներդ կազմեցեք 5 նախադասություն՝ անորոշ ձևի բայերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55. Հետևյալ բայերով կազմեցեք 6 նախադասություն՝ բայերը դորձածելով անորոշ ձևով և 5 նախադասություն՝ խոնարհված ձևով:

ՅՈՒՅՈՒՄ. Գրել, վագել, նստել, գնալ, խաղալ, լվացվել, հագնվել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56. Հետևյալ ձևով խոնարհել՝ առաջադիվ, ստանալ, բնտրել, աշխատել և կարգալ բայերը:

Ն ե Ր Կ ա		Ս ն Գ Ե ա լ	
Դրական	Ժխտական	Դրական	Ժխտական
Դրում եմ	Չեմ գրում	Դրեցի	Չգրեցի
Դրում ես	Չես գրում	Դրեցիր	Չգրեցիր
Դրում ե	Չի գրում	Դրեց	Չգրեց
Դրում ենք	Չենք գրում	Դրեցինք	Չգրեցինք
Դրում եք	Չեք գրում	Դրեցիք	Չգրեցիք
Դրում են	Չեն գրում	Դրեցին	Չգրեցին
Դրիր	Մի գրիր	Դրել եմ	Չեմ գրել
Դրեցեք	Մի գրեցեք	Դրել ես	Չես գրել
	Կամ մի գրեք	Դրել ե	Չի գրել
		Դրել ենք	Չենք գրել
		Դրել եք	Չեք գրել
		Դրել են	Չեն գրել
Դրած եմ	Չեմ գրած	Դրած ես	Չես գրած
Դրած ես	Չես գրած	Դրած ե	Չի գրած
Դրած եք	Չեք գրած	Դրած ենք	Չենք գրած
Դրած եք	Չեք գրած	Դրած են	Չեն գրած
Դրում ելի	Չելի գրում	Դրում ելիր	Չելիր գրում
Դրում ելիք	Չելիք գրում	Դրում եր	Չեր գրում
Դրում ելինք	Չելինք գրում	Դրում ելիք	Չելիք գրում
Դրում ելին	Չելին գրում		

Այս առնի	
Դրական	Ժխտական
Դրելու լեմ	Չեմ գրելու
Դրելու լես	Չես գրելու
Դրելու լե	Չի գրելու
Դրելու լենք	Չենք գրելու
Դրելու լեք	Չեք գրելու
Դրելու լեն	Չեն գրելու
Կգրեմ	Չեմ գրի
Կգրես	Չես գրի
Կգրի	Չի գրի
Կգրենք	Չենք գրի
Կգրեք	Չեք գրի
Կգրեն	Չեն գրի
Պիտի գրեմ	Չպիտի գրեմ
Պիտի գրես	Չպիտի գրես
Պիտի գրի	Չպիտի գրի
Պիտի գրենք	Չպիտի գրենք
Պիտի գրեք	Չպիտի գրեք
Պիտի գրեն	Չպիտի գրեն
Դրեմ	Չգրեմ
Դրես	Չգրես
Դրի	Չգրի
Դրենք	Չգրենք
Դրեք	Չգրեք
Դրեն	Չգրեն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57. Այս վտանավորից ջոկեցիք բայերը և նրանց դիմաց նշանակեցիք զրական, ժխտական, հրամայական և անորոշ ձևերը, ինչպես նաև թիվը, դեմքը և ժամանակը:

Որինակ՝ քշեց — զրական ձև, յեղակի ~~թիվ~~, յերրորդ դեմք, անցյալ ժամանակ:

Քշեց նախիրը մեր նախրորդ հսկան, Յելավ Սասունի սարերն աննըման:

— «Ե՛յ ջան սարեր,

Սասմա սարեր,

Ինչ անուշ ե

Ձեր լանջն ի վեր...»

Վոր կանչեց, նրա ձենից ահավոր

Դրդորդ-զրմբզրմբոցն ընկավ սար ու ձոր:

Վայրի գազաններ բռնեցից փախան,

Քարեքար ընկան, դատարկուն յեղան:

Դավիթն ել՝ ընկավ նրանց յետևից,

Վորին մի սարից, վորին մի ձորից,

Գեր, ինծ, առյուծ, արջ, վազրը, բռնեց,

Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց

Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք:

Վռնոց, մռռնչյուն, աղմուկ, աղաղակ...

Վախկոտ քաղքըցիք մին ել ի՞նչ տեսան,

Հենց քաղքի վրա անհամար գազան...

(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58. Հետևյալ վտանավորից ընտրեցիք բայերը և նրանց առաջ դրեք անձնական դերանունները՝ համապատասխան թվով ու դեմքով:

— «Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք»...

Մեծեր, յերեխեր

Սըրտաճաք յեղած,

Գործերը թողած

Փառան, ներս ընկան տուն. ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին գուռն ու լուսամուտ
Դավիթը յեկավ կասգնեց մեյդանում:

— Վահ, ես քաղքըցիք ինչ գաղ են քընում:
Հեյ կովատեր, հեյ գոմշատեր,
Յելեք շուտով, բաղեք զբռներ,
Ով միսն ուներ — տասն եմ բերել
Ով տասն ուներ — քսանն արել:
Շուտով յեկեք, յեկեք տարեք,
Ձեր յիշն ու կով գոմերն արեք:
Տեսա՞յ՝ չեն գալի, գուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնրվեց քաղքի մեյդանում,
Գլխը գրբավ սի քարի, մրնաց,
Ու մուշ-մուշ քըսեց միսչև լուսաբաց:
Լուսին իշխաններ յելան միասին,
Գրնացին Ձենով Ոհանին ասին.
— Աման, քեզ մատաղ, այ Ոհան ախպեր,
Մեր յեզն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից ազատ արա մեզ:
Վոչ արջն ե ջոկում, վոչ գոմեշն ու յեզ,
Մի որ ես քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի, կըտա կավերի:

(Հ. Թ.)

Որինակ՝ գուռ փակեք:

6. Թ Վ Ա Կ Ա Ն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59. Կարգացեք «Մեր դպրոցը» հոգված
և ասացեք, թե թվականներն առարկաների ինչն են ցույց
տալիս:

ՄԵՐ ԴՊՐՈՅԸ

Մեր դպրոցն ունի յոթը դասարան, հինգ կա-
բինետ, մեկ գրադարան, յերկու ընթերցարան, մեկ
ուսուցչանոց և մեկ դահլիճ: Բոլորն ել համարա-
կաված են: Կարինետների դռներին գրված է՝
ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմեկերորդ
և տասներկուերորդ: Ընթերցարանների դռներին գրե-
ված է՝ տասնչորսերորդ և տասնհինգերորդ, ուսուցչ-
անոցին՝ տասնվեցերորդ, դահլիճին՝ տասնյոթերորդ:
Առաջին դասարանում կա 30 աշակերտ, յերկրորդ
դասարանում՝ 35 աշակերտ, յերրորդ դասարանում՝
38 աշակերտ, չորրորդ դասարանում՝ 25 աշակերտ,
հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ դասարաններում
կան 30—աղան աշակերտ: Ընդամենն ունենք 218
աշակերտ, փորոնցից 118 աղջիկներ են, 100 տղաներ:

Առարկաների թիվը կամ կարգը ցույց տվող
բառերը կոչվում են թվական: Թվականները լինում
են ֆանակական և դասական:

Քանակական թվականներն են՝ մեկ, յերկու, յե-
րեք, չորս, հինգ, հարյուր, հազար և այլն:

Քանակական թվականները պատասխանում են
ֆանի°, վոքսա° և ինյա° հարցերին:

Դասական թվականներն են՝ առաջին, յերկրորդ,
յերրորդ, չորրորդ, հինգերորդ, յառերորդ, ֆաներորդ,
հարյուրերորդ, հազարերորդ և այլն:

Դասական թվականները պատասխանում են վոք
կամ ֆանի° երորդ հարցերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60. Արտագրելիս տրված քանակական թվականների դեմաց գրեցեք նրանց դասական թվականները, ընդգծելով այն մասնիկները, վոր ավելանում են քանակական թվականը դասականի վերածելու դեպքում:

Քանակակ.	Դասական	Քանակակ.	Դասական
Մեկ	Առաջին	Տասնմեկ	Տասնմեկերորդ
Յերկու	Յերկրորդ	Տասներկու	
Յերեք		Տասներեք	
Չորս		Տասնչորս	
Հինգ		Տասնհինգ	
Վեց		Տասնվեց	
Յոթ		Տասնյոթ	
Ութ		Տասնութ	
Ինն		Տասնինն	
Տաս		Քսան	

Քանակական	Դասական
Յերեսուն	Յերեսուններորդ
Քառասուն	
Հիսուն	
Վաթսուն	
Յոթանասուն	
Ութսուն	
Իննսուն	
Հարյուր	
Հազար	
Միլիոն	

Դասական թվականները կազմվում են քանակական թվականներից՝ ստանալով բորդ կամ երորդ մասնիկները:

Ընդ ավելանում է միայն յերկու, յերեք և չորս քանակական թվականների վերջում (յերկրորդ, յերրորդ չորրորդ), իսկ 5-ից սկսած մինչև միլիոն, միլիարդ և այլն քանակական թվականների վերջում ավելանում է երորդ մասնիկը (հինգերորդ, հազարերորդ, միլիարդերորդ և այլն):

Բացառությամբ է կազմում միայն առաջին բառը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61. Արտագրեցեք հետևյալ հարցերի լրիվ պատասխանները՝ գնելով թվականները:

Տարին քանի՞ ամիս ունի: Հունվարը քանի՞ որ ունի: Որը քանի՞ ժամ ունի: Ժամը քանի՞ րոպե ունի: Բայկեն քանի՞ վայրկյան ունի:

Քանի՞ եջ կա այս գրքում: Քանի՞ տառ կա այս եջում: Քանի՞ աշակերտ կա մեր դասարանում: Քանի՞ աշակերտ կա մեր ամբողջ դպրոցում: Վճրքան ե մեր քաղաքի բնակչությունը: Վճրքան ե մեր գյուղի բնակչությունը: Քանի՞ տրակտոր կա մեր շրջանում: Քանի՞ յեզ կա մեր գյուղում: Քանի՞ ձի ունի մեր կոլտնտեսությունը: Քանի՞ ավտո կա մեր շրջանում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62. Արտագրելիս յուրաքանչյուր թվականից առաջ փակագծերում գրեցեք համապատասխան հարցերը:

Տարին ունի տասներկու ամիս, ամիսն ունի հինգ վեցորյակ: Հուլիսը յոթերորդ ամիսն ե: Նոյեմ-

բերը տասն եկերորդ ամիսն է: Մի յիսը հինգերորդ ամիսն է: Մարտը յերրորդ ամիսն է: Փետրվարը յերկրորդ ամիսն է: Տարվա մեջ մենք սովորում ենք տասն ամիս: Տարին ունի 365 օր: Նահանջ տարին ունի 366 օր: Յուրաքանչյուր 4-րդ տարին նահանջ տարի չէ: Յես 12 տարեկան եմ, իմ յեղբայրը 16 տարեկան է:

Որինակ՝ Տարին ունի (քանի՞ ամիս) տասներկու ամիս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63. Հետևյալ հոդվածն արտազրեւիս թվականները գրեցե՛ք տառերով:

ՄՈՍԿՎԱ-ՎՈՂԳԱ ՁՐԱՆՑԲԸ

Մոսկվա-Վոլգա ջրանցքը կառուցելիս փորել և տեղափոխել են աշտեղից 600 000 000 խոր, մետր հող: Նեթե այդ հողը տեղափոխվեր յերկաթուղով, հարկավոր կլինե՞ր 20 000 000 ապրանքատար վագոն: Ձրանցքի կառուցումների վրա ծախսված է 240 000 տոնն մետաղ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64. Հետևյալ ձևով գրեցե՛ք, թե ձեր դպրոցի յուրաքանչյուր դասարանում քանի՞ աշակերտ կա:

Մեր դպրոցն ունի հինգ դասարան

Լ ր ի վ բ ա ո ե ռ ո վ	Արաբական թվանշաններով
Առաջին դասարանն ունի 30 աշակ.	1-ին դաս. 30 աշ.
Յերկրորդ դաս. ունի 50 աշ.	2-րդ դաս. 50 աշ.
Յերրորդ դաս. ունի 40 աշ.	3-րդ դաս. 40 աշ.
Չորրորդ դաս. ունի 40 աշ.	4-րդ դաս. 40 աշ.
Հինգերորդ դաս. ունի 35 աշ.	5-րդ դաս. 35 աշ.

Հ ո ո մ ե ա կ ա ն թ վ ա ն շ ա ն ն ե ռ ո վ	Հայկական տառերով
I դասար. ունի 30 աշ.	Ա. դաս. ունի 30 աշ.
II դաս. ունի 50 աշ.	Բ. » ունի 50 աշ.
III դաս. ունի 40 աշ.	Գ. » ունի 40 աշ.
IV դաս. ունի 40 աշ.	Դ. » ունի 40 աշ.
V դաս. ունի 35 աշ.	Ե. » ունի 35 աշ.

Դասական թվականները կարող են արտահայտվել ամբողջական բառերով. որինակ՝ առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ և այլն:

Արաբական թվանշաններով—1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և այլն:

Հռոմեական թվանշաններով—I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X և այլն:

Ալբանական տառերով — ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65. Հետևյալ հարցերին տվե՛ք գրավոր պատասխան: Թվանշանները տառերով գրեցե՛ք:

90-ի կեսն ինչի՞ յե հավասար, 40-ի մեկ քառորդն ինչի՞ յե հավասար, 70-ի մեկ ութն օրդն ինչի՞ յե հավասար, 60-ի հինգ վեցերորդն ինչի՞ յե հավասար: Ի՞նչ կստացվի, յեթե 100-ին գումարենք 90-ի կեսը:

Յե՛րբ ե ծնվել ընկեր Լենինը (1870 թ. ապրիլի 22-ին): Յե՛րբ մեռավ ընկեր Լենինը (1924 թ. հունվարի 21-ին): Յե՛րբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը (1917 թ. նոյեմբերի 7-ին): Յե՛րբ հիմնադրվեց Կոմունիստական 3-րդ ինտերնացիոնալը (1919 թ. մարտի 4-ին):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66. Հետևյալ հոգվածն արտագրելիս թվանշանները գրեցե՛ք բառերով, իսկ տարեթվերը՝ թվանշաններով:

Խորհրդային Միության տարրական դպրոցներում սովորողների թիվը հազար իննհարյուր քսան ութ թվի 10 միլիոնից հազար իննը հարյուր յերեսուներկու թվին հասավ 19 000 000-ի: Միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը 1 600 000-ից հասավ 4 256 000-ի: Տեխնիկումներում և բանֆակներում սովորողների թիվը 264 000-ից հասավ 1 437 000-ի: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը 166 000-ից հասավ 500 000-ի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. ա) Արտագրեցե՛ք թվական անունները բառերով, բ) գրեցե՛ք նույնպես թվականների դասականը:

Քարտուղարն արագորեն հանեց իր մաշված շարված պորտմոնեն, բաց արեց, միջի փողը — սև ու սպիտակ գրամներ — թափեց գրասեղանի վրա և սկսեց համբել, դրամները մեկ-մեկ քաշելով մի կողմը — 10, 11, 15, 20, 25, 29, 35, 37, 50, 52, 55, 58, 60, 62 կոպեկ:

Որինակ՝ (Նար-Դոս «Նեղ որերից մեկը»)

Քանակական

Դասական

Քսանհինգ

Քսանհինգերորդ

7. Մ Ա Կ Բ Ա Յ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68. Արտագրեցե՛ք աջ և ձախ սյունակների հոգվածները և ընդգծեցե՛ք աջ սյունակում ավելացրած բառերը: Առաջե՛ք, թե այդ բառերն ի՞նչ են ցույց տալիս:

Կոլտնտեսականները (յե՛րբ) սկսում են գարնանացանը:

Աշխատանքները տանում են (ինչպե՛ս):

Բրիգադիրներն աշխատանքներն սկսելուց առաջ (ինչ-քան) ստուգում են իրենց գործիքները:

Ամեն ուր աշխատանքները հաշվի չեն առնվում (վճր-տեղ):

Կոլտնտեսականները գարնան սկզբից սկսում են գարնանացանը:

Աշխատանքները տանում են հարվածախորհու:

Բրիգադիրներն աշխատանքներն սկսելուց առաջ քանիցս ստուգում են իրենց գործիքները:

Ամեն ուր աշխատանքները հաշվի չեն առնվում տեղն ու տեղը:

Այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե՛

- 1) ինչպե՞ս է կատարվում գործողությունը (ուժգին, արագ, կամաց, հերոսաբար, ամբողջապես, բոլորակողմնորեն, բոլորովին և այլն):
- 2) յե՞րբ է կատարվում գործողությունը (հիմա, այժմ, յերբեք, եզուց և այլն):
- 3) ո՞ւր կամ վո՞րտեղ է կատարվում գործողությունը (տեղնուտեղը, դեմառդեմ, ամենուրեք, սարնի-վեր և այլն):
- 4) վո՞րքան կամ վո՞րչափ է կրկնվում գործողությունը (քանիցս, բազմիցս, շատ անգամ և այլն) — կոչվում են մակրայնեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69. Հետևյալ հոգվածից ջղեցե՛ք և արտագրեցե՛ք մակրայնեքն այն բայերի հետ, վորոնց վերաբերում են այդ մակրայնեքը:

Զ Բ Ո Ս Ա Ն Ք

Առաջուց մենք պայմանավորված եյինք զրոսանքի գնալու: Արդեն մենք ճանապարհորդում

եյինք: Մեր ճանապարհին դեմհանդիման գտնվում էր անտառը: Սարսիւփար հոսում էր գետակը: Ամեն ւրեք կոլտնտեսականներն եյին աշխատում: Անմիջապէս մենք մոտեցանք գետակին և իսկույն մեր շորերը հանելով՝ մտանք ջուրը լողանալու: Շատ անգամ ենք մենք լողացել գետում, բայց այս անգամ անմիջապէս լցվեցինք հաճույքով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70. Հետևյալ մակըայները դասավորեցեք ըստ սյունակներում ըստ իրենց համապատասխան հարցերի:

Դեմառդեմ, ներքուստ, դեռ, ավելի, բոլորովին, տարեցտարի, ուժգին, դարձյալ, հազիվհազ, կրկին, նորից, հազիվ, լիովին, դեմհանդիման, վերջիվերջո, չափազանց, մերթընդմերթ, հարկավ, անպատճառ, այնուհետև, պատնիսներ, լիովին, քանիցս, այսուհետև, ամենուրեք, քիչ-քիչ, յերբեք, փոքրինչ, վաղուց, լայնորեն, եզուց:

Որինակ.

Ու՞ր, վորտեղ	Ինչպէ՞ս	Յե՞րբ	Վորքան, ինչքան
Դեմառդեմ	Ուժգին	Հիմա	Քանիցս
.....			
.....			

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71. Հետևյալ մակըայները և վորպէս մակըայ գործածվող բառերը դասավորեցեք յերկու սյունակներում այնպէս, վոր հականիշներ ստացվեն:

Հիմա, յետև, ներքուստ, վերև, միասին, ներս, մոտ, հեռո, առանձին, ընկերաբար, առջև, արտաքուստ, թշնամաբար, դուրս, հեռու, ներքև

Որինակ՝ առջև, յետև:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72. Հետևյալ մակըայներով կազմեց՝ բնութագրե՛ք նախադասութիւններ:

Տեղ ցույց տվող.— Տեղնուտեղը, դեմառդեմ, սաշիւփեր, ներքև, վերև:

Ժամանակ ցույց տվող.— Հիմա, արդեն, որեցոր, դեռ, վաղուց, այժմ, յերբեմն:

Քանակ ցույց տվող.— Մեկէկէմեկ կէկ, քիչ-քիչ, շատ-շատ, չափազանց, ավելի:

Ձեզ ցույց տվող.— Ուժգին, դարձյալ, հետզհետև, հազիվ, կամաց-կամաց, իսկույն, թերևս, անպատճառ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73. Կետերի տեղը մակըայներ դրե՛ք:

..... գնում եմ զպոյ: Պիտներները բարձրանում են: Մեր դպրոցին կանգնած է ոպերայի շէնքը: վրտանքի չեմ գնացել: հուզված է խոսում նա: մենք անցանք լեռնանցքով: փայլեց կարմիր դրոշակը հյուսիսային բևեռում:

ՅՈՒՅՈՒՄ. Հիմա, վաղուց, դեմառդեմ, սարսիւփեր, չափազանց, մեկէկէմեկէկ, դարձյալ:

ՄԱԿԱՐԱՅԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74. Հետևյալ բառերով կազմեցեք նախադասութիւններ և ասացե՛ք, թե այդ բառերը նախադասութիւն մեջ ի՞նչ են ցույց տալիս:

ՅՈՒՅՈՒՄ. Հերոսաբար, ընկերաբար, նախապես, մեծապես, բարեկամաբար, հարվածայնորեն, հավասարապէս, կոմունիստորեն, յեղբայրաբար, ստախանովականորեն, զլխովին, քաջաբար, ամբողջովին, լիովին:

Բար, պես, ուրեմ, ովին ածանցները բառերի վերջն ավելացվելով՝ այդ բառերը դարձնում են գործողութիւն ձևը ցույց տվող մակըայներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75. Հետեյալ բառերը համապատասխան վերջածանցներով դարձրեք մակբայներ և կազմեցե՛ք նախադասութիւններ:

Ֆիզիկա, ամբողջ, նախ, վախկոտ, թշնամի, գա-
զան, վստահ, մեքենա, լայն, բոլոր, լի, անասուն:
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76. Հետեյալ հոգւածից շփեցե՛ք բոլոր
մակբայները և դասավորեցե՛ք ըստ տեսակների:


ԻՆՉՈՒ ՄԵՉ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑԻՆ

Ամբողջ գիշերը հորդ անձրև եր տեղում: Ամենու-
րեք փոքրիկ առվակներ եյին գոյացել և հոսում եյին
լեռնիվար: Վարարած գետը ժամանակ առժամանակ
սպառնում եր քանդել մեր ջրաղացի ամբարտակը: Գի-
շերվա կեսն եր, մեր բրիգադիրը՝ ընկ. Թեփոսը մեզ ձայն
տվեց: Փոքրինչ հետո մեկիկ-մեկիկ հավաքվեցին մեր
բրիգադի բոլոր անդամները: Մեր կոլոնտեսության
նախագահը՝ ընկ. Սարգիսը կարգադրեց, վոր անմի-
ջապես վերցնենք բահերն ու քլունգները և գնանք
գետի հունը լայնացնելու: Մեր բրիգադը հերոսա-
բար եր կռվում գետի կատաղի ալիքների դեմ: Մենք
ամբողջովին թաղվել եյինք ջրի մեջ: Գետը հետզհե-
տե ալեկի յեր վարարում և արդեն ամբողջովին
ծածկել եր ամբարտակը: Թեփոսը չափազանց վրդե-
վորված՝ մեզ միշտ խրախուսում եր: Մենք աշխա-
տում եյինք և աստիճանաբար լայնացնում եյինք
գետի հունը: Աշխատում եյինք մեծ փոփոխու-
թյամբ և զեռ լույսը չբացված, այդ ահեղ գոտե-
մարտի մեջ, մենք արդեն հաղթանակը տարանք:
Գետը լիովին սանձահարված, հլու ու հնազանդ հո-
սում եր իր հունով, իսկ ամբարտակը կանգնած եր
հպարտ, վորպես աշխատանքի հաղթանակի կոթող:


Մեր բրիգադն որվա հերոսն եր: Բոլորը մեծա-
պես գոհ եյին մեր աշխատանքից, և մենք նորից
պարգևատրվեցինք:

Տ. Կ Ա Պ


Յես գնում եմ
դեպի քաղաք




Նա գրում ե աս-
նանց սխալների



Գործարանները
պալքարում են
վորակի համար



Մենք գնում
եյինք ընկերներին
հետ



Կապ են կոչվում այն բառերը, վորոնք նախադասության մեջ ստորոգյալի լրացումը կապում են ստորոգյալի հետ: Այս նախադասությունների մեջ դեպի, առանց, համառ, հետ բառերը կապեր են:

Կապերը գրվում են ստորոգյալի լրացումից առաջ կամ հետո: Առաջ գրվողները կոչվում են նախադրություններ, իսկ հետո գրվողները կոչվում են հետադրություններ:

Կապերը միայն կապվող բառերի հետ գործածվելիս են ստանում նշանակություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77. Արտագրելիս կապերից հետո կետերի տեղը զրեք փակագծերում տրված լրացումները պահանջված հոլովով, իսկ կապերն ընդգծեցեք:

Այդ գործը չեմ կարող կատարել առանց . . . (ընկերներ) ողնության: Բոլորը պիտի մեկնեն Բագու, բացի . . . (դու): Աշխատելու յենք այսպիսի միջին . . . (հունվար): Յես քեզ ճանաչում եմ իբրև . . . (ընկեր): Մեր լեռնագնացները գնում են զեպի . . . (Արագած):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78. Կապերից առաջ կետերի տեղը զրեք փակագծում տրված լրացումները պահանջված հոլովով:

Խոսեցինք ձեր (թերություններ) . . . մասին: Ամեն (աշխատանք) . . . համար գործիքներ են հարկավոր: Ձեր (ջանքեր) . . . շնորհիվ շուտ վերջացրի գործը: Մեր (պայմանագիր) . . . համաձայն այսոր ավարտեցինք շենքի կառուցումը: Յես (Սուրիկ) . . . հետ գնացի դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79. Արտագրեցե՛ք՝ կետերի տեղը գնելով բաց թողած կապերը:

Ուսանողության . . . ճաշ պատրաստեցի: Ամառային շոգերը տևեցին . . . հոկտեմբեր: Սեր գիրեկաորի աշխատանքների . . . ուսումնական տարին լավ վերջացրինք: Մարդիկ չեն կարող ապրել . . . բնակարանի: Մենք հաղթանակից . . . հաղթանակ ենք գնում: Ձեր աշխատանքների . . . շատ ե խոսվել: Բոլորը պիտի գան . . . մեկից:

Հայտնվում ե . . . գիտություն բոլորին: Հաշիվները փակվում են . . . 15-ն մայիսի:

ՑՈՒՑՈՒՄ. Առանց, բացի, դեպի, մինչև, մասին, համար հետ, շնորհիվ, ի, առ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80. Այս հոդվածից արտագրեցե՛ք կապերը:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Գիտնական Շմիդտը հերոս ողաչու Վոդոպյանովի և այլ հետախույզների հետ թուով դեպի Հյուսիսային Բեվեռ: Առանց վորևե վտանգի նրանք վայրեջք կատարեցին Հյուսիսային Բեվեռի սառույցների վրա: Մինչև այսոր վոչ վոքի չեր հաջողվել այդպիսի խիզախ գործ կատարել:

Հյուսիսային Բեվեռի վրա այժմ հպարտ ծածանվում ե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության դրոշակը: Աշխարհի բոլոր թերթերը հաղորդագրություններ տպագրեցին Խորհրդային խիզախ հետախույզների մեծ հաղթանակի մասին:

Գիտնական Շմիդտի և նրա հերոս ընկերների այդ խոշոր հաղթանակը մեր սոցիալիստական հայրենիքի համար մեծ պարծանք ե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81. Արտագրեցե՛ք և խմբավորեցե՛ք կապերն ըստ տեսակների:

Յեվ նա թռչկոտելով վազեց փողոցով:

Գոսան սպանված էյին ընկած սալահատակի վրա: Ծուխը մշուշի պես բռնել էր փողոցը: Կոպիտները դժվարությամբ էյին ջոկում իրար, թեև փողոցն առանձնապես յերկար չէր: Այդ ձեռնտու յեր Գավ-րոշի համար: Նա, իր կարճ հասակի շնորհիվ, ծխի ծածկույթի տակ բավականին հեռու գնաց փողոցի մեջ ու կարողացավ վերցնել յոթը, թե ութ փամ-փուշտակալ, առանց իրեն վտանգելու: Նա մեկ սո-ղում էր փորի վրա, մեկ չորեքթաթ էր տալիս, կո-ղովն ատամներով բռնած գալարվում էր, անցնում էր մի դիակից մյուսը: Բարբրիկադի ընկերները, վոր ամ-բողջ ժամանակ հետևում էյին նրան, վախենում էյին ձայն տալուց, վոր թշնամու ուշադրությունը չզարձնեն նրա վրա:

(Վ. Հյուգո «Բարբրիկադների վրա»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82. Բացեք փակադները և դոյականը գոր-ծածեցեք պահանջված հոլովով. ընդգծեք կապերը:

1. Առանց (գիրք) դաս չեն սովորում. 2. Այդ միջոցին կարելի չէր նրա (դեմք) վրա նշմարել լըր-ջություն (Շ.): 3. Այստեղ ապրանքը դարաված էր (հատակ) վրա, (պատեր) տակ . . . (Շ.): 4. Այս ասելով նա անմիջապես դիմեց դեպի (զոներ) (Շ.): 5. Արդարև, հիվանդի (աչքեր) յերեվում էր յեսամուրի հոգի . . . (Շ.): 6. Մենք մինչև (կա-յարան) ուղեկցեցինք իտալացիներին (Շ.): 7. Յնթե գոմի (գուռ) մոտ կապած ուլը չլիներ, մենք կկարծեյինք, թե այս (տուն) մեջ կենդանի շունչ չկա (Մուր.). 8. (Մելիք) վրա ել տարին մի քանի

անգամ պրոտակոլ էյին սարքում, բայց ամեն ան-գամ այդ «թունդ» թղթերը մնում էյին առանց (հետևանք) (Փափ.): 9. Պետք է փախչել, բայց ազան (ձյութ) պես կպել է հրացանից (Փափ.): 10. Յերևի ուզում է հանդիմանել վորևե (բան) համար (Զորյան):

9. Շ Ա Ղ Կ Ա Պ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83. Հեռեյալ հոգվածից ջոկեցեք պարզ և բարդ նախադասությունները և ձեր տետրակներում գրեցեք՝ նախ պարզ նախադասությունները և ապա բարդ նախադասու-թյունները:

Այդ նախադասությունների մեջ ընդգծեցեք և, ու, քե, այլ, իսկ, բայց, սակայն, այսինքն, ուրեմն, վոր, յեթե, վորպեսզի, վորով-հետեվ բառերը:

Ուսուցիչները միշտ գտվում են Սուրբիկին և Գրիշային, նրանք յերկուսն ել գերազանցիկներ են: Որվա մեծ մասը կարդում ու գրում են: Լավ են սովորում: Աշակերտներից վոմանք նրանց սիրում են, իսկ մյուսներն ել աշխատում են հասնել նրանց և գերազանցել: Մեր աշակերտության մեծ մասը, թեև միջակից բարձր գնահատականներ ունի, սակայն չի բավարարում մեր պահանջները: Մեր սոցմրցման պայմանագրի առաջին կետն է՝ տարին փակել սուանց թույլերի, ուրեմն պետք է աշխատել իրագործել այդ:


Պետք է կարգավորել մեր դպրոցի կաբինե-լաբորատորիաներն անմիջապես, վորովհետև նրանք նպաստում են ինքնուրույն աշխատանքներին: Պետք է իրագործել ծրագիրը, այսինքն՝ անցնել ամբողջ ծրագիրը թե ըստ ծավալի և թե ըստ խո-րության:

Պարզ նախադասութեան բաղմանի անդամները կամ բարդ նախադասութեան առանձին նախադասութիւններն իրար հետ կապող բառերը կոչվում են շաղկապ: Շաղկապներն ինքնուրույն նշանակութիւն չունեն, հետեւաբար նախադասութեան անդամ լինել չեն կարող: Ամենագործածական շաղկապներն են յեւ, ու, թե, բայց, իսկ, սակայն, այսինքն, ուրեմն, վոր, յերե, վորպեսզի, վորովհետեւ բառերը:

ՎԱՐԺՈՒՅԹՈՒՆ 84. Հետեւյալ նախադասութիւններն արտահայտեցե՞ք սխեմայով.

Վազգենը և Կորյունը գնացին դպրոց: Քնարիկը, Յողիկը և Վարդուշը սովորում էին: Սեդան գնաց և վերադարձավ: Եմման յերգում ե, իսկ Ամալիան պարում ե: Վազգենը գնում ե աշխատանքի: Բայց նա ակտիվ չի մասնակցում մաքրելու գործին: Յես գիրք էյի կարդում, սակայն ինձ խանգարում էին: Աշխատում եմ, վորպեսզի գործս շուտ վերջացնեմ: Յեթե ուզում եք, յես կմասնակցեմ ձեր աշխատանքներին: Այսօր դպրոց չգնացի, վորովհետեւ հիվանդ էյի:

Որինակ՝ Վազգենը և Կորյունը խաղում էին:



Սեդան գնաց և նա վերադարձավ:

Սեդան	—	գնաց	և	նա	—	վերադարձավ
-------	---	------	---	----	---	------------

ՎԱՐԺՈՒՅԹՈՒՆ 85. Արտագրեցե՞ք հետեւյալ նախադասութիւնները՝ կետերի տեղը գնելով համապատասխան շաղկապները:

Սուբիկը ... Գրիշան գերազանցիկներ են: Յերբ ազդանշանը տրվեց, պիոներները հավաքվեցին ... հոկտեմբերիկները գնացին դպրոց: Առավոտյան շուտ հագնվեք և պատրաստվեցեք, ... չուշանաք դասերից: Ընկերս այսօր դպրոց չեկավ, ... հիվանդ եր: Մենք շուտով վերջացնելու յենք մեր աշխատանքները, ... թատրոն գնանք:

ՎԱՐԺՈՒՅԹՈՒՆ 85 ա. Հետեւյալ հոդվածից ընտրեցե՞ք շաղկապներ և կազմեցե՞ք նախադասութիւններ:

Ա. Ք Վ Ա

Աքվա. այսպես եր փոքրիկ կաթիլի անունը: Թեպետ փոքրիկ ու աննշան եր նա, բայց շատ հետաքրքրական բան եր տեսել իր կյանքում:

Յեւ արևն իր ջերմ շողերն ուղարկեց, Աքվային տաքացրեց, թեթեւ գոլորշի դարձրեց, ու Աքվան բարձրացավ վեր, վեր: Նա հետզհետե սառչում եր, սառչում և վերջապէս միացավ այն ամպիկին, վորին նայում եր ներքեւից, յերբ դեռ ինքը գտնվում եր ծովում:

Յեւ տեսնում ե Աքվան, վոր սպիտակին են տալիս տնակները, կանաչին՝ այգիներն ու մարգագետինները, իսկ դրանց միջով ժապավենաձև ձրկվում ու անցնում են ճանապարհները:

10. ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86. Արտագրեցեք շղագրով ապված բառերը
և ասացե՛ք՝ ի՞նչ են արտահայտում նրանք նախադասության մեջ:
Տո՛, ձենո՛վ Ոհան, տո՛, մահի տարած,

Ես խենթը բերի՛ր, արի՛ր գառնարած...:

Վա՛ն, ես մարդիկը ինչ վաղ են քնում:

Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր,
Յեղեք, շուտով բացեք դռներ:

Վա՛յ, վա՛յ, հորեղբայր, ի՛նչ ասեմ յես քեզ:

Ա՛յ խենթ խելագար, վոսկին պահել եմ Մելիքի
համար:

Ինձ թող, ամա՛ն, մի՛ սպանիր,

Կուզես, հրե՛ն, գնա հանիր:

Հառա՛յ կանչելով փախավ տուն ընկավ,
— Վա՛յ, փախե՛ք, յեկավ, հա՛յ, հառա՛յ, յեկավ:

Հե՛յ, հե՛յ, Դավիթ, վճռեղ ես դու:

Հա՛յ, հա՛յ, — ասավ, — հորեղբայրս ե:

Ափսո՛ւ, հագար ափսո՛ւ, հրեղեն մեր ձին,
Ա՛յ, հրեղեն մեր ձին:

Ո՛Ք, ել հանգիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից:

Հե՛յ, ուր ես, Դավիթ, դուրս արի մեյդան:

Այն բառերը, վորոնք խոսողի հուզմունքը, զգաց-
մունքը, ցանկությունը և կոչն են արտահայտում —
կոչվում են ձայնաբերություն:

Ձայնաբերություններն արտասանվում են յերկա-
րացներով կամ շեշտերով: Նրանց վրա դրվում է յեր-
կարացման (բացականչական) նշան կամ շեշտ (՝), (՛):

Համեմատաբար շատ գործածվող ձայնաբերություն-
ներն են՝ ո՛խ, ո՛Ք, ա՛խ, վա՛խ, վա՛յ, վա՛ն, ա՛յ, ե՛յ,
հե՛յ, դե՛, դե՛ն, ո՛ն, ո՛, ա՛ն, ափսո՛ւ, հա՛յ-հա՛յ,
վա՛յ-վա՛յ, վո՛ւ-վո՛ւ:

Ձայնաբերությունները նախադասության անդամ
չեն լինում և ստորակետով անջատվում են նախա-
դասության անդամներից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87. Հետեվյալ նախադասությունների ձայ-
նաբերությունների առողանություն և տրոհության նշաններն ինք-
ներդ դրե՛ք, տեղափոխելով այդ ձայնաբերությունները նախադա-
սության մեջտեղը կամ վերջը:

Որինակ՝ Վահ, դու յես, Կարո:

Վահ սոսկալի յե ցավում վերքս:

Ձան վաղը մեր դասերը կսկսվեն:

Դե քեզ տեսնեմ, վոնց ես սովորում:

Պահ պահ պահ ինչ հրաշալի կանաչեղեն ե:

Վայ վայ վուլ վուլ չկա ու չկա:

Ափսոս ուշացա դասերից:

ՈՔ բավական հանգստացա:

Վահ, Յերվանդ, յեկար արդեն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88. Հետեւյալ ձայնարկությունները գործածեցեք նախադասությունների հետ:

Հե՛յ, ա՛յ, դե՛ն, ո՛ն, վա՛խ, ո՛ճ, վա՛յ, ա՛վա՛ղ:

11. Կ Ո Չ Ա Կ Ա Ն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89. Ընդգծեցեք ձախ սյունակում յեղած նախադասությունների յենթակաները, համեմատելով աջ սյունակի նախադասությունների հետ:

Ընկերները բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը:

Աշակերտները պայքարում են ուսման փորակի համար:

Բանվորները կատարում են իրենց պլանները:

Կոլտնտեսականները գերակատարեցին իրենց գարնանացանը:

Յերեխաները միասին դպրոց գնացին:

Սուրիկը դպրոց գնաց: Գրիշան թատրոն է գնալու:

Դու իզուր ես գնում:

Ահա մեր դպրոցի պարծանքը:

Ընկերների հետ գնում ենք դաշտն աշխատելու:

Ընկերներ, բարձրացրեք աշխատանքի արտադրողականությունը:

Աշակերտներ, պայքարեցեք ուսման փորակի համար:

Բանվորներ, կատարեցեք ձեր պլանները:

Կոլտնտեսականներ, գերակատարեցեք գարնանացանի պլանը:

Յերեխաներ, միասին եք գնում դպրոց:

Սուրիկ, դպրոց գնացիր: Գրիշա, թատրոն գնալով յես:

Դու, Սուրեն, իզուր ես գնում:

Ահա, ընկերներ, մեր դպրոցի պարծանքը:

Գնանք դաշտն աշխատելու, ընկերներ:

Այն բառը, փոք ցույց է տալիս, թե խոսողն ումն է դիմում մի բան ասելու կամ հարցնելու համար, կոչվում է կոչական: Կոչականները նախադասության անդամներից անջատվում են ստորակետով և միշտ շեշտ են ընդունում իրենց վերջին վանկի ձայնավորի վրա:

Կոչականները նախադասության անդամ չեն լինում:

Յեթե կոչականներն ունեն լրացումներ, շեշտը փոխադրվում է նրանց վրա: Որինակ՝ ընկերներ, շտապեցեք վերջացնելու գործը: Սիրելի ընկերներ, շտապեցեք վերջացնելու գործը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90. Արտագրեցեք հետևյալ նախադասությունները և կետերի տեղը դրեք համապատասխան լրացումների՝ կոչական բառերի շեշտը փոխադրելով լրացումների վրա:

* * * բանվորներ, բարձրացրեք արտադրողականությունը:

* * * ուսանողներ, պայքարեք ուսման փորակի համար:

* * * սահմանապահներ, ուժեղացրեք ձեր հսկողությունը:

* * * պիոներներ, պատրաստվեցեք գնալ լագեր:

ՅՈՒՅՈՒՄ. Գերազանցիկ, ստախանովական, արթուն, աշխուժ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91. Հետևյալ նախադասություններն արտագրելիս ընդգծեցեք կոչականները և դրեք շեշտերը:

Սուրիկ, այսօր գնալով յես թատրոն:

— Վոչ, յես գնալու յեմ գրադարան գիրք կարդալու համար:

— Իսկ դու, Սաշա, հիմա ուր ես գնում:
 — Յես գնալու յեմ կինո, Արամն ել ե գնալու:
 — Հա, Արամ, դու Սաշայի հետ ես գնում, թե՞
 Գրիշայի: Բա ուրեմն յես մենակ եմ գնալու:
 — Չե, Գրիշան ել ե գալիս գրադարան:
 — Հա, Գրիշա, դու ընկերանում ես ինձ:
 — Այո, յես նույնպես ժամը 6-ին գրադարան
 եմ գնալու:
 — Սաշա, մի նայիր՝ ժամը քանիսն ե:
 — Ժամը 6-ից պակաս ե 15 րոպե, ուրեմն, սիրե-
 լի ընկերներ, արդեն ուշացել ենք:
 — Այո, ուշացել ենք, և դժվար թե այլևս մեզ
 ներս թողնեն:
 — Ընկերներ, մենք արդեն գնում ենք, դուք
 ել շտապեցեք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92. Արտադրեցեք հետևյալ հատվածները և
 ընդգծեցեք կոչականներն ու ձայնարկությունները:

— Բարով, Դավիթ, հոգնած ես զեռ:
 Յեկ, մի նստիր, խոսենք կարգին,
 Հետո դարձյալ կրուիվ կանենք,
 Յեթե կրուիվ կուգես կրկին...

Իչավ Դավիթ ձիուցը ցած,
 Գրնաց նըստեց... ընկավ հորը:
 — Հա, հա, հա, հա, քահ-քահ խընդաց
 Մըսրա դաժան թագավորը:

Սաստիկ վախեցած վեր թռավ տեղից:
 — Վա՛յ, կընիկ,—ասավ,—մի ճըրագ արա:

— Ի՞նչ յեղավ քեզ, մարդ, զիշերվան կիսին,—
 Բարկացավ վըրեն կընիկըն ազմուկով:

Յերավ Ոհանը, գոմը մըտավ,
 Ջարկեց ճերմակ ձիու մեջքին.
 — Ե՛յ, ճերմակ ձի, մինչ յե՞րբ,—ասավ,—
 Կըհասցընես Դավթի կըռվին:

— Ջան կարմիր ձի, մինչ յե՞րբ դու ինձ
 Կըհասցընես Դավթի կըռվին:

— Ե՛յ, ջան Սևուկ, մինչ յե՞րբ,—ասավ,—
 Կըհասցընես Դավթի կըռվին:
 (Հ. Թ.)

12. ՀԵՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93. Արտադրեցեք առաջին և յերկրորդ
 սյունակի բառերը, իսկ յերրորդ սյունակում գրեցեք այն տառերը,
 Վոր սղվել կամ փոխվել են:

1.	2.	3.
Հուր-ա-վառ	Հրավառ	Ու
Հուս-ավոր	Հուսավոր	
Թիվ-ա-կիր	Թվակիր	
Սեր-ելի	Սիրելի	Ե-ն փոխվել ե ի-ի
Մատյան-ա-վար	Մատենավար	
Մատանի-գործ	Մատանեագործ	

Յերբ ի, ու, ույ, յա, ե հնչյունն ունեցող բառերի վերջում նոր բառեր կամ վանկեր են ավելացվում, հաճախ այդ հնչյունները սղվում կամ ուրիշ հնչյունների լեն փոխվում:

Հնչյունների այս փոփոխությունը կոչվում է հնչյունափոխություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94. Հետևյալ հոդվածից ջրեցեք հնչյունափոխություն յենթարկված բառերը և բաժանեցեք բաղադրիչ մասերի:

ՄԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գարնանային մի առավոտ եր. մեր կոլտնտեսությունից բոլոր անդամները դրսում աշխատում և շնչում եյին թարմ ու զովաշունչ ոդ:

Կոլտնտեսությունից գործունեությունից մասին զեկուցեց ընկ. Յերվանդը՝ կոլտնտեսությունից նախագահը: Չեկուցումից պարզվեց, Վոր բոլորն ել սրտացավ և բարյացակամ վերաբերմունք ունեն դեպի կոլտնտեսությունից աշխատանքները: Այս տարի չորացված են ճահճային տարածությունները և պատրաստվում են աշնանացանի համար: Այգեգործական բրիգադը հրաշալի աշխատանք է տարել: Մեր պարտիզանները նույնպես զոփասանքի արժանացան: Նրանք լավ տիրություն են արել այգիներին և ժամանակին հարվածել են թշնամական տրամադրությունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95. Հետևյալ բառերը վանկերի բաժանեցեք և քառակուսի մեջ տեղ աչն վանկերը, վորոնք վերջանում են բաղաձայնով, իսկ ձայնավորով վերջացող վանկերը միայն ընդգծեցեք:

Քար, փայտ, մուկ, ծաղիկ, քաղաք, ջրաղաց, դարբին, քաջություն, մարդկային, ձիավոր, ձի, հայելի, հանգիստ, խտրություն, գրագետ:

Որինակ՝ քար	=	քար		
քաղաք	ֆա	ղաք		
խտրություն	=	խրա	-րու-	թյուն

Յերբ վանկը վերջանում է բաղաձայնով, կոչվում է փակ վանկ, իսկ յերբ վերջանում է ձայնավորով, կոչվում է բաց վանկ: Որինակ ջուր—փակ վանկ է, իսկ ձու բաց վանկ է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96. Առաջին սյունակի բառերը համեմատեցեք յերկրորդ սյունակի բառերի հետ և յերրորդ սյունակում գրեցեք այն վանկերը, վորոնց ձայնավորները սղման կամ փոփոխման են յենթարկվել:

Ջուր-հոր	Ջրհոր	Ջուր
Տուն-ակ	Տնակ	
Հատուկ-ապես	Հատկապես	
Անասուն-ական	Անասնական	
Սիրտ-առուչ	Սրտառուչ	
Գիր-ա-վոր	Գրավոր	
Ամիս-թիվ	Ամսաթիվ	
Բժիշկ-ություն	Բժշկություն	
Լույս-ավոր	Լուսավոր	
Աշխուժ-ություն	Աշխուժություն	

Բառերի վերջում նոր բառեր տկամ վանկեր ավելացնելիս նրանց մեջ յեղած ու, ի հնչյունները և ույ յերկհնչյունի յ հնչյունը սղվում են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97. Հետևյալ բառերի վերջում համապատասխան մասնիկներն ավելացնելով՝ կազմեցե՛ք նախադասություններ, ընդգծելով սղվող տառ ունեցող բառերը:

Ձուր, զարուհ, աշուն, պատիվ, ժողովուրդ, թիվ, ժիր, արխիվ, բույս, ձուկ, հազիվ, ճշմարիտ, մարգարիտ:

ՑՈՒՑՈՒՄ. Ական, ալին, ատես, ավետ, աղոր, իկ, ություն, ալ:

Որինակ՝ ջրային տնտեսությունը կարգավորեց իր աշխատանքները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98. Հետևյալ բառերը բաժանեցե՛ք իրենց բաղադրիչ մասերի և ընդգծեցե՛ք փոփոխվող բառերը:

Սիրելի, հանդիպել, գիտակցություն, պաշտոնեյուլթյուն, պատանեկական, ձվաձև, մատենավար:

Որինակ՝ սիրելի-սեր-ելի—ե-փոխվել ե ի-ի:

Բառերի վերջում նոր բառեր կամ վանկեր ավելացնելով հաճախ այդ բառերի միջի ե-ն փոխվում ե ի-ի, յա-ն փոխվում ե ե-ի, ու-ն փոխվում ե վ-ի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99. Հետևյալ հոդվածից ջոկել շղագրով ապված բառերը և վերածել բաղադրիչ մասերի:

Հեշտ ե գրվել թղթի վրա...

Ն. Զարյան

Ճառախոսների խոսքերը թրթռում եյին ողի մեջ՝ ամբոխի գլխին:

(Գորկի)

Զինվորների շարքը միջից կիսվեց:
(Գորկի)

Զորքերը ձգված եյին խնուղու յերկարությամբ:
(Սերաֆիմովիչ)

Անձանոթը նստած եր մտածկոտ:
(Հյուզո)

Որն արագապես մթնում եր... Դռան արանքից լույսի շերտերը հազիվ եյին նշմարվում:
(Նառ-Դոն):

Որինակ՝ Թղթի-թուղթ-ի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100. Հետևյալ հոդվածից ջոկեցե՛ք հնչյունափոխված բառերը և նրանցով կազմեցե՛ք պարզ նախադասություններ:

ՄԵՐ ՓՈՐՁԱԿԱՅԱՆԸ

Այս տարի ցանված են բժշկական բույսեր՝ լըվածաղիկ և մկնիտտ: Ցանված են նաև անասունի կեր: Դաշտերում բուսականությունը նույնպես հրաշալի յե: Պատրաստված են ջրի առուները: Զրկորներն անձնվեր ու սրտցավ վերաբերմունք ունեն: Կիսված ու ցանված են ածուները: Զրելու աշխատանքները տարվում են անխափան կերպով: Թռչնաբուծությունը զարգացած ե: Պարտիզականները պայքարում են բոլոր վնասատուների դեմ: Կրաջրով քսված են բոլոր ծառերը: Մկնդեղով և փարիզյան կանաչով սրսկված են բոլոր այգեստանները: Մեր գերազանցիկները պարգևատրվեցին փոսկեղոծված և փղոսկրյա գրիչներով: Նրանք անսահման սիրվում են մեր բոլորի կողմից: Այս տարի մեծ բերք ենք սպասում:

13. ԲԱՌԱՆԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Աւմաս յեմ ածանց

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101. Արտագրեցեք հետևյալ բառերը և ընդգծեցեք ամեն մի սյունակում կրկնվող և միևնույն իմաստ ունեցող մասերը:

Մարդ	Գործ	Ընկեր
Նախամարդ	Գործիչ	Ընկերաբար
Մարդկային	Գործողութիւն	Ընկերային
Մարդավարի	Գործունչա	Ընկերութիւն
Մարդկութիւն	Գործնական	Ընկերավարի
Տմարդի	Գործավարութիւն	Ընկերական
Անմարդ	Անգործ	Անընկեր

Որինակ՝ մարդավարի, մարդկային, մարդկութիւն և այլն:

Բառի այն հիմնական մասը, վորը կրկնվում է մի շարք բառերի մեջ և ամեն տեղ միևնույն ընդհանուր իմաստն ունի, կոչվում է արմաս:

Այն մասնիկը, վորն ավելանում է արմասի սկզբից կամ վերջից և նոր բառ է կազմում, կոչվում է ածանց:

Ածանց ունեցող բառերը կոչվում են ածանցավոր բառեր:

Ածանց չունեցող բառերը կոչվում են արմասակա կամ պարզ բառեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102. Արտագրեցեք՝ ածանցավոր բառերը և արմատները զծիկով անշատեցեք ածանցներից:

Տնակ, փոքրիկ, տաքուկ, ձագուկ, ընկերական, աշակերտական, հարվածային, քաղաքային, գունատ, հերոսաբար, քաջաբար, փայտեղեն, յերկաթեղեն, արևմտյան, արևելյան, քաջութիւն, վորթիւթիւթիւթիւթ, Չինաստան, Ուղբեկատան, բանջարասորգութիւն, Չինաստան, Ուղբեկատան, բանջարանոց, զողանջիւն, գողգողիւն, գործիչ, յերգիչ, ծակոտի, աշակերտուհի, քանվորուհի, չորրորդ, յերրորդ, հինգերորդ, վեցերորդ, հայերեն, ռուսերեն, ընդ, հինգերորդ, վեցերորդ, հայերեն, ռուսերեն, յերգիչ, հոգնակի, քաղաքացի, գյուղացի, հնոցապան, դռնապան, փառարան, գրադարան, խնձորենի, տանձենի:

Արմատների վերջում ավելացող ածանցները կոչվում են վերջաւանցներ:

Գործածական վերջաւանցներն են՝ ալ, իկ, ուկ, ալկան, ալին, աւ, աբաւ, եղեն, յան, ություն, ոս, սսան, ոց, անոց, յուն, իչ, ոսի, ունի, բորդ, երորդ, երեն, ալի, ցի, ացի, պան, որդ, ենի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103. Հետևյալ բառերից շուկեցեք պարզ և ածանցավոր բառերը և գրեցեք առանձին սյունակներում:

Ջրային, սեղան, փայտեղեն, մատիտ, թուղթ, մանկական, վիրավոր, տախտակ, գյուղացի, յերամ, ննջարան, հատ, փառարան, գիրք, բարձիկ, սփռոց, թռչուն, յերկնային, մրգեղեն, թանաք, ցեղական, դուռ, ծաղկանոց, անտառ, փոսկեղեն, յերկաթ, ընկուզենի, առևտուր, քաղաքական, կուլտուրապետ, ճանապարհ, գոլիզգոլի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104. Հետևյալ բառերն արտագրեցեք և ընդգծեցեք ածանցները:

Մակագրեր, մակդիր, մակընթաց, ներարկել, ներգործել, ներուժ, գերազանց, գերագույն, գերածախս, հակադիր, պարփակել, պարուրել, վերադիր, անտուն, ապերախտ, վերլուծել, դժբախտ, տգեղ, վերնագիր, չտես, ապաբախտ, տմարդի, չխոսկան:

Արմատների սկզբում ավելացող ածանցները կոչվում են նախածանցներ: Ամենադործածական նախածանցներն են՝ առս, գեր, մակ, ներ, հակ, վեր, ան, ապ, ս, դժ, չ:

Նախածանցներից ան, ապ, դժ, ս, չ կոչվում են ժխտական, փորովհետև դրվելով բառերի վրա՝ հակառակ իմաստ են տալիս նրանց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105. Արտագրելիս հետևել լա բառերին տվեք համապատասխան նախածանցները:

Հարվածային, ճառել, ընթացություն, գրավել, կանգնել, պետք, գեղ, գոհ, խոսկան:

ՅՈՒՅՈՒՄ.—գեր, հակ, ան, մակ, ներ, ա, դժ, չ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106. Հետևյալ բառերի նախածանցները, արմատները և վերջածանցներն արտագրեցեք ղեմ գիմաց, առանձին սյունակներում:


Լուսավոր, տգեղություն, տմարդություն, զժգոհություն, վերականգնել, մակագրություն, ներգրավել, գերազանցիկ, հակադրություն, ներգործում, ապերախտություն:

Որինակ՝ մակընթացություն, տգեղություն:

Նախածանց	Ա. ր մ ա տ	Վ ե ր ջ ա ծ ա ն ց
Մակ	ընթաց	ություն
Տ	գեղ	ություն
.	.	.
.	.	.
.	.	.
.	.	.
.	.	.
.	.	.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107. Հետևյալ ածանցավոր բառերն արտահայտեցեք սխեմայով:

Գործ, գործավար, գործունյա, գործիչ, անգործ, Տուն, տնակ, տնային, տնանկ, անտուն, Գույն, գունավոր, զժգույն, անգույն:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108. Հետևյալ հոգվածից ընտրեցեք ածանցավոր բառերը և ընդգծեցեք ածանցները մեկ գծով, իսկ արմատները՝ յերկու գծով:

Տխտանապետ Լենին-դյուցազն «հասեք» կանչեց, ու ճայնի հետ Բանփորները գնդերն յեղան ինչպես վարար ծովեր ու գետ: Հողփորները գետեր յեղան հեռու մոտիկ հող ու ճամբից:

Փայտաց Լենինն այն լուսնի պես, վոր դեռ նոր է
ծաղում ամպից.

Յեկան խուցից, խոհանոցից ու կիսակնիս մի
մարդու պես,

Կանայք դժգուլյն ու հերարձակ, ճակատներով
արեվակեց,

Խրոխտ ինչպես ջահել վագրեր, սակայն դալուկ
ու սովատանջ

Նայում եյին հսկաներին՝ սրած ուշիմ աչք ու
ականջ,

Կարիքի սև կաթով անված աղամարդիկ յեկան
խինգով,

Սեսա խմբերն առյուծների, գաշտը լցրին խոլ
շունդով,

Կրանց տանջված աչքերի մեջ անհաշտ կովի բոցն
եր շողում

(Է. Շիրազ)

ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109. Հեռեկալ բարդ բառերն, ըստ արված
որինակի, պարզ բառերի վերածեցեք:

Հողաչափ, գուլգընթաց, թզթատար, ծովափ,
գասընկեր, հացթուխ:

Որինակ՝ ծովափ, — ծով-ափ. ջրկիր — ջուր-կիր.
գլատասխտակ — գիր-սախտակ:

Յերկու կամ ավելի արմատներից կազմված
բառերը կոչվում են բարդ բառեր:

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110. Հեռեկալ բարդ բառերը, ըստ որինակի,
բաղադրիչ մասերի վերածեցեք, առնելով այդ մասերը քառակուսի
սիների մեջ:

Սեվահող

սև . . . հող

Քարաշեն
Սեղանատուն
Հացատուն
Քարհանք
Քանդակագործ
Ջրհոր
Քարտաշ
Գետափ
Դրամարկղ
Հացթուխ

ՀԵՍՀ

Հայկական

Խորհրդային

Սոցիալիստական

Հանրապետություն

Լուսծողկում

Քաղխորհուրդ

Բարդ բառերը կազմվում են բառերի կամ ար-
մատների միացումով:

Բառերի կամ արմատների միացումը կատարվում
է հողակապով, առանց հողակապի կամ բառերի հա-
պավումներիով:

Հողակապը ա ձայնավոր տառն է:

Հապավումները կատարվում են՝ 1) բառերի սկզբ-
նական տառերով (ԽՍՀՄ): 2) Բառերի սկզբնական
մասերով (Ժողկոմխորհ) և 3) Առաջին բառի առաջին
մասով և վերջին ամբողջ բառով (Քաղխորհուրդ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111. Հետևյալ պարզ բառերն ըստ տրված արինակի միացնելով կազմեցե՛ք բարդ բառեր:

Վարդ—գույն, ծառ—տունի, ձյուն—պատ, կաթըն—գույն, դաս—ընկեր, հող—շերտ, գիր—սենյակ, յերկաթ—ուղի, ջուր—ամբար:

Որինակ՝ վարդագույն, ջրամբար և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112. Հետևյալ բարդ բառերով կազմեցե՛ք նախադասություններ, ընդգծելով բարդություն վերջին բառի առաջին առն:

Նավապետ, քարաժայռ, լրացիր, գրատախտակ, մրգավաճառ, սարալանջ, ծաղկաման, ձիարշափ, թիափար, բնագետ, ձիավարժ, անասնապահ, լուսարձակ, ջրաղաց:

Որինակ՝ նավապետը զեկավարում է իր նավը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113. Ձախ և աջ սյունակների բառերը համեմատելով իրար հետ՝ արտադրեցե՛ք և յերրորդ սյունակում գրեցե՛ք սղվող տառերը:

Արև — յեղ	արևելք	յ
Բարձր — վորակ	բարձրորակ	վ
Ծով — յեզր	ծովեզր	• • ձ
Քայլ — յերգ	քայլերգ	• • ձ
Լավ — վորակ	լավորակ	• • ձ
Ձուկ — վորս	ձկնորս	• • ձ
Անձրև — վորդ	անձրևորդ	• • ձ
Քաջ — վորդի	քաջորդի	• • ձ
Ան — յեզր	անեզր	• • ձ
Ան — վորակ	անորակ	• • ձ

Բարդ բառերը կազմելիս՝ յերրորդ բառերի սկզբի յե և վո յերկհնչունների յ և վ տառերը սղվում են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114. Հետևյալ բառերը միացնելով կամ այդ բառերի վրա նախածանցներ ավելացնելով՝ կազմեցե՛ք բարդ կամ ածանցավոր բառեր և գործածեցե՛ք նախադասություններ: ժեջ:

Փիղ—վոսկր, վոչ—վոք, շուք—յերթ, այծ—յեղջուր, ան—յերեփակայելի, լայն—յեզր, ան—վոզնաշար, ան—յերեր, ան—վորս, ստոր—յերկրյա, ան—վողորկ, վեր—յելք, ծունկ—վոսկր, յերկ—յերեսանի, ան—վորոշ:

Որինակ՝ նոր—յեկ, նորեկ, նորեկը բարենց մեզ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115. Հետևյալ հատվածներից ջոկեցե՛ք բարդ բառերը և վերածեցե՛ք բաղադրիչ մասերի:

Լուսակերտ է ապարանքը թագմորի,
Անապատում, վորպես յերազ վոսկեհյուս,
Յոթն հարյուր սյունի վրա մարմարի
Սլանում է աշտարակը յերկնասույզ:

Փիրուզ ծովը, վոր փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի,
Ձունի այնպես, այնպես փրփուր ձյունաթույր,
Ինչպես կուրծքը լուսապայծառ Բամբիշի:

Շշնջում է լուսաթաթախ Բամբիշի
Ականջն ի վար այնպես քնքռւշ, հեզասահ,
Ինչպես լուսնի շողակաթը թավիշի,
Այն հոյակապ սյուներն ի վար մարմարյա:
(Ս. Խաճատյան)

Որինակ՝ լուսակերտ = լուս+ա+կերտ:

14. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ և Թ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116. Հետևյալ բառերով կազմեցե՛ք նախադասություններ ըստ արված որինակի:

Արթուն, խորթ, թարթել, հորթ, մորթել, շողոքորթել, շուրթ, սաղարթ, քերթել, զվարթ, կիրթ, հերթ, մերթ, յերթ, Պարթև, վորթ (վազ):

Բարդ, մարդ, վարդ, բերդ, զարդ, յերդում, կարդալ, նյարդ, լյարդ, ժողովուրդ, խորհուրդ, հորդ, թակարդ, ճանապարհորդ, վորդ, վորսորդ, վորդի, յերրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն:

Որինակ՝ արթուն պահակները հսկում են մեր կոլտնտեսության գույքին:

Բարդ խնդիրներ ենք լուծում արդեն:

Յերբեմն բառերի մեջ լսվում է ք, բայց գրվում է դ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117. Արտագրեցե՛ք և կետերի տեղը դրե՛ք ըստ թողած տառերը:

Վար... երի կարմիր փնջերով զար... զարեցին հերոսի կուրծքը: Հոր... առատ անձրևների ժամանակ ճանապարհոր... ությունը փառապարհ է: Ամրացել է թորհր... ային Միության ժողովուր... ների բարեկամությունը: Մեր հերոս ո... աշունները տիրեցին Հյուսիսային Բեմին: Յերրոր... անգամն է, վոր մեր սավառակներն անցան Հյուսիսային

Բեմին վրայով: Մի փորսոր... իր փար... ամ հասկով կանգնած եր ծառերի կանաչագար... սաղար... ների տակ և թակար... ներ եր լարում վայրի անասուններին: Ծառերը զար... արված են ծաղիկներով, իսկ թռչունները զվար... ազին դայլայլում են խան... ավառ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 118. Ձեր ուղղագրական բառատետրում գրեցե՛ք այնպիսի բառեր, վորոնց մեջ դ-ն հնչվում է ք:

Գ և Ք ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 119. Գրեցե՛ք հետևյալ բառերից կազմված նախադասություններ:

Թարգման, Պարզև, յերգ, կարգ, արգելք, միրգ, ճիգ, շոգ, հոգնել, նորոգել, ոգնել, կարագ, մարագ, ուրագ, հոգնակի, ոգտակար, վոգևորություն, ծագել, հագնել, պարզև, ավագ:

Հաճախ ք բաղաձայնից հետո, յերբ ք է լսվում, մեծ մասամբ գ է գրվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120. Արտագրեցե՛ք և կետերի տեղը դրե՛ք ըստ թողած տառերը:

Ձեր յեր... ն իմ սրտի ցան... ությունների թար... մանն է: Այ տղա, անուշդ Ավա..., գնա մարա... բեր կարա... : Նորո... ման ցեխի ավա... վարպետին՝ Մար... իս Գրի... որյանին պար... ևատրեցին պատվոգրով: Մար... արիտն ու Մար... իսը բամբակի դաշտն են գնում: Ամեն առավոտ, արևը դեռ չծա... ած, մեծ վո... ևորությամբ աշխատանքի յեն գնում: Վոչ վոք չի կարող նրանց ար... ելք դառնալ: Այսոր մենք ստացանք նոր հրահան..., Թար... մանությամբ գրադված Մար... իսը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121. Ձեր ուղղագրական բառատեսքում
զրի առեք այնպիսի բառեր, վորոնց մեջ գրվող գ-ն հնչվում է ֆ:

Ձ ՅԵՎ Ձ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 122. Հետևյալ բառերով կազմեցեք նախա-
դասություններ:

Սըջ, լուրջ, շրջել, փորջ, կամուրջ, թրջել, մըր-
ջյուն, յերջանիկ, շրջաբերական, շրջան, վերջ:

Ձղջալ, յեղջյուր, չղջիկ, աղջիկ, փողջույն, առողջ
ամբողջ:

Սռաջարկ, առաջին, աջակից, հաջել:
Մեջ, միջատ, միջոց, եջ, միջակետ:

Արմատական բառերի մեջ **ր** է **ղ** բաղաձայննե-
րից հետո հաճախ լսվում է **ջ**, գրվում է **ջ**:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 123. Ուղղագրական բառատեսքում զրի
առեք այնպիսի բառեր, վորոնց մեջ **ջ**-ն հնչվում է **չ**:

Ձ ՅԵՎ Յ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 124. Հետևյալ բառերով կազմեցեք նախա-
դասություններ:

Արձակուրդ, արձան, արձանագրել, արձագանք,
բարձ, բարձր, դարձ, դարձյալ, դերձակ, ընդարձակ,
համարձակ, որավարձ, սանձարձակ, փորձ:

չ բաղաձայնից հետո յեթե լսվում է **ց**, մեծ մա-
սամբ գրվում է **ձ**:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 125. Աբաղաբերիս կետերի տեղը դրեք
բաց թողած տառերը:

Ար...ակուրդին մերոնք գյուղ են գնում: Այդ
գյուղի սարերի բար...ը գազաթները դեռ ձյունով

ծածկված են: Գյուղացիները մեծ համար...ակու-
թյամբ են խոսում իրենց ընդար...ակ խոտհարք-
ները հն...ելու մասին: Նրանք մեծ փոր...ունեն:
Մի քանի անգամ շրջանի կենտրոնի կողմից ար-
...անագրված են նրանց այդ հաջողությունները: Այդ
հաջողություններն ար...ագանք են գտել շրջանի
գյուղերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 126. Ձեր բառատեսքում գրեցեք այնպիսի
բառեր, վորոնց մեջ **ձ** գրվում է, բայց հնչվում է **ց**:

Ղ ՅԵՎ Խ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 127. Հետևյալ բառերով կազմեցեք նախա-
դասություններ:

Ղ—թուղթ, աղբյուր, աղբ, աղտ, հաղթել, չղջիկ,
խեղդել, ուղտ, վողբ, աղջիկ, աղջամուղջ, այծեղ-
ջուր:

Խ — յերախտիք, տախտակ, բախտ, ժխտել, պան-
դուխտ, նախշուն:

Արմատական բառերի մեջ բաղաձայններից առաջ
մեծ մասամբ յերբ **խ** է լսվում, **ղ** է գրվում: Խ շատ
քիչ է գրվում, այն ել սովորաբար **ս** բաղաձայնից
առաջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 128. Աբաղաբերիս կետերի տեղը դրեք
բաց թողած տառերը:

Ա...ջիկը սափորն ուսին գնում եր ա...բյուրը
ջրի: Սաթիկը թ...թապանակի մեջ շատ թ...թեր
եր տեղավորել:

Սանդու...տը սիրում է դե...ձ: Տեղակիդ
շապկին թու...թ քաշիք, փոր չկե...տոտվի:

Ու... տը քայլում ե, դե... ձանիկն ու չ... ջիկը
թռչում են: Ա... բն ու կե... տը մաքրեցեք: Թողա...
տը վարակիչ հիվանդություն ե:

Ի ՅԵՎ Ռ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱՅԻՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. 129. Հետևյալ բառերով կազմեցեք նախադասու-
թյուններ և ընդգծեցեք ու բաղաձայնին հաջորդող բաղաձայն տառը:

Արծաթ, արծիվ, դառնալ, արտ, դռնակ, դարդ,
խառնել, նռնակ, բոպե, ձեռնարկ, սառնություն,
բռներ, Ռոդա, Ռիմա, ռեֆորմ, բեֆոլուցիա:

Արմատական բառերում և բաղաձայնից առաջ
գրվում ե ու, մյուս բաղաձայններից առաջ մեծ մա-
սամբ գրվում ե ր:

Բառասկզբում գրվում ե ու, բացի բայից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 130. Արտագրեցեք և կետերի տեղ դրեք
բաց թողած տառերը:

Դա...նություն, լե...նաշղթա, խու...ծ, լե...նադա-
դաթ, մա...դ, լե...նանցք, կա...դար, բե...նակիր, մա...
դիկ, դա...ծյար, ա...նչություն, վա...դ, խա...նուրդ,
բ...ներ, ա...ներ, սավա...նակ, ա...ծիճ, ա...ծեք, խա...
նաշփոթություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 131. Հետևյալ հոգվածից ջոկեցեք այն
բառերը, վորոնց մեջ.

1. Գրված ե դ, բայց կարդացվում ե ք:
2. Գրված ե գ, բայց կարդացվում ե ֆ:
3. Գրված ե ջ, բայց կարդացվում ե չ:
4. Գրված ե ձ, բայց կարդացվում ե ց:
5. Գրված ե ո, բայց կարդացվում ե լս:

«ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ»-Ի ԼԱԿԵՐԸ

Շոգերն արդեն սկսվում են: Ամառային ար-
ձակուրդը մոտենում ե: Դպրոցները զարգարված

են և պատրաստվում են տարեվերջի քննություն-
ներին: Տրամադրությունը շատ բարձր ե: Յերկ-
րորդ տարին ե, վոր մասնակցում եմ յերգեցիկ
խմբին և արձակուրդներին իմ ընկերներին՝ Գեվոր-
գի, Վարդանի, Աբգարի և Ավագի հետ գնում ենք
«Կաթնաղբյուր»-ի լագերում հանգստանալու:
Առավոտները գոմաշունչ քամին սանձարձակ, բայց
դուրեկան հորձանքներով հոսում ե անտառի սա-
ղարթների միջով, իսկ մենք Ֆիզկուլտուրնիկներս՝
տղաներն ու աղջիկները միասին, կարգով գնում
ենք մերձակա կամրջի յեզերքին նոր կառուցված
հրապարակը լիցքային վարժություններ կատարելու
համար: Ամեն անգամ, յերբ արևը բարձրանում ե,
մենք գնում ենք մերձակա գետակը լողանալու
համար: Դուրեկան ե այդ գետակի ջրերում
լողանալը, մանավանդ վոր ջրերը շատ վճիռ են և
խեղդվելու ել փառնգ չկա:

Մենք յերբեմն ել անտառ ենք բարձրանում
զբոսնելու համար: Անտառում մենք հաճախ ենք
տեսել փախչող յեղջերուներ և յերբեմն ել արջեր:

Յորբեք չեմ կարող մոռանալ «Կաթնաղբյուր»-ի
լագերը:

Ը ՁԱՅՆԱՎՈՐԻ ՈՒՂԱՅԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 132. Հետևյալ բառերով կազմեցեք նա-
խադասություններ:

Ընդունել, ընթերցարան, ընկեր, ընկուզենի,
ընտանի, ընտրել, ընդարձակ, զբոսանք, զգեստ,
զբաղմունք, զգաստ, զգացողություն, զգուշանալ:
Շտապել, շտեմարան, շպրտել, շպարել, սկսել, սկիզբ,

սպիտակ, ստեղծել, ստիպել, Սուրիկը, գրիչը, աշակերտը, ուսուցիչը, դպրոցը, մկրատը, քաղցը, ծանր, գլխարկ, գնալ, գտնել, զնգալ: Դասընթաց, դասընկեր, հատընտիր:

Յերբ բառի սկզբում ը ձայնավորը լսվում է, գրվում է: Բառի սկզբում ը ձայնավոր չի գրվում, յերբ բառն սկսվում է ա, գ, շ բաղաձայններով, յերբ այս տառերին հաջորդում են բ, պ, փ, գ, կ, ֆ, Տ, ք բաղաձայնները:

Բառերի վերջում, յերբ լսվում է ը ձայնավորը, նույնպես գրվում է: Ը-ն հաճախ փոխվում է ն-ի, յերբ հաջորդ բառը ձայնավորով է սկսվում: Յերբ բարդ կամ ածանցավոր բառերի յերկրորդ բառն սկսվում է ը-ձայնավորով, չի սղվում: որինակ՝ դասընկեր, հատընտիր, անընկեր, զուգընթաց և այլն:

Ը ձայնավորը գրվում է նաև, բառը վանկերի բաժանելիս կամ սողադարձի ժամանակ:

Տողադարձի ժամանակ ը-ն գրվում է միայն գրված վանկի և հաջորդ տողի առաջին վանկի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 133. Հետևյալ նախադասություններից ջուկեցեք այն բառերը, վորոնց մեջ ը ձայնավորը գրված է, և անջատման դժիկով ցույց տվեք այդ բառերի կազմությունը:

Արագընթաց գնացքը մեկնեց Մոսկվա: Փողոցով զուգընթացաբար գնում էյին յերկու ավտոմոբիլներ: Իմ դասընկերը գերազանցիկ է: Գետը սրընթաց է հոսում ձորնիվար: Այսօր կարդացի թումանյանի ամենաընտիր փոտանավորները: Ըսկսվեց նախընտրական կամպանիան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 134. Հետևյալ նախադասություններից արտագրեցեք ը հնչյունով սկսվող բառերը:

Ձավենն ընդունակ աշակերտ է: Կոլտնտեսականներն ստացան առատ բերք: Մեր ընտանիքն ապրում է ուրախ ու յերջանիկ: Յես ակտիվ մասնակցություն ունեցա Գերագույն Խորհրդի ընտրություններին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135. Հետևյալ նախադասություններից ընտրեցեք այն բառերը, վորոնց սկզբում ը լսվում է, բայ չի գրվում:

Գարնանացանն արդեն սկսվեց, հանգստյան տան պարտեզում զբոսնում էյին բանվորները: Շտապում եմ, վորովհետև ընկերներս սպասում են ինձ: Չգաստ պետք է լինել և սթափվել բարեհոգությունից: Չպետք է սքողել թերությունները, այլ բաց անել՝ նրանց վերացնելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 136. Հետևյալ նախադասությունների մեջ ընդգծել այն բառերը, վորոնց մեջ ը-ն փոխվել է ն-ի:

Կոլտնտեսականները գնացին աշխատանքի: Կոլտնտեսականներն աշխատանքի գնացին: Ձանգը զողանջել սկսեց: Ձանգն սկսեց զողանջել: Մեքենաները գործում են արագությամբ: Մեքենաներն արագությամբ գործում են: Հարվածայինները նվերներ ստացան: Հարվածայիններն ստացան նվերներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 137. Հետևյալ բառերը վանկերի բաժանելով կոլտնտեսական, ստախանովական, սոցմրցում, գրադարան, մկրատ, Մկրտիչ, գլխարկ, գրչակոթ, ստացական, հանգստու-

թյուն, շտապել, սկսել, դասընկեր, կարգադրութիւն, ընթերցարան, ծովեզր, հանդգնել, նվիրել, գրատախտակ, զգաստութիւն:

15. ԲԱՌԳՐԻՔՈՒՅԿԻՅ ՈԳՏՎԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 138. Անգիր սովորել հայկական տառերն իրենց հերթական կարգով—ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, լա, ժ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ը, ց, ու, փ, ք, ֆ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 139. Հետևյալ բառերը դասավորել սյունակներում: Առաջին սյունակում դասավորելիս պահպանել միայն առաջին տառերի այբբենական հերթականութիւնը: Յերկրորդ սյունակում դասավորելիս նկատի ունենալ առաջին և յերկրորդ տառերի այբբենական հերթականութիւնը, իսկ յերկրորդ սյունակում դասավորելիս հաշիւ առնել առաջին, յերկրորդ և յերրորդ տառերի դասավորումը և այսպես՝ չորրորդ, հինգերորդ և այլն:

Աբգար, Ազիզ, Ազատ, ագարակ, ավերակ, անցուղարձ, անգանշան:

Բաբախել, բորբոքել, բողբոքել, բերան, բեխ:

Դազաթ, Դիբոր, գրագետ, գտնել, գնալ, գինի գիծ, գերան:

Դադար, դրոշ, դրդել, դրամ, դուրս, դուռ, դմակ, դիտակ, դիակ, դերանուն, դեմառդեմ:

Զամբուլ, Զվարթ, զորք, զտել, զույգ, զինաթափ, զենիթ, զեղծում:

Մագնիս, մրցում, մոտիկ, մըրիկ, մրոտ, մտերիմ, մտածել, մսեղեն, մսագործ, մորթ, մոռացկոտ, մնացորդ, միրգ, միջատ:

Որինակ՝

Աբգար	Աբգար	Աբգար
Ազիզ	ս գարակ	Ագարակ
Ազատ	Ազիզ	Ազատ
Ագարակ	Ազատ	Ազգանշան
Ավերակ	Ազգանշան	Ազիզ
Անցուղարձ	Անցուղարձ	Անցուղարձ
Ազգանշան	Ավերակ	Ավերակ
Բաբախել	Բաբախել	Բաբախել
Բորբոքել	Բերան	Բեղ
Բողբոքել	Բեղ	Բերան
Բերան	Բորբոքել	Բողբոքել
Բեղ	Բողբոքել	Բորբոքել

Բառարանում բառեր գտնելու համար առաջին անգամ պիտի գտնել առաջին տառը, փոքից հետո այբբենական կարգով պիտի գտնել յերկրորդ տառը, ապա յերրորդը և այլն:

16. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 140. Հետևյալ հոգվածի նախադասութիւններին յենթականերն ընդգծեցէք մի գծով, ստորագյալները յերկու գծով:


Ուսումնական տարին սկսվեց: Բոլոր դպրոցները զարգարված են: Մեր դպրոցը գեղեցիկ է: Զանգը հնչեց: Աշակերտները հավաքվել են: Դասերն սկսվեցին: Դասերից հետո ժողով ունեցանք: Դիլեկտորը խոսեց: Ամեն ինչ պատրաստ է: Դասագրքերը գնված են: Դասարանները նորոգված են: Շենքը մաքրված է: Նոր կաբինետներ են բացված: Բոլոր ուսուցիչները ներկա յեն: Աշխատանքները կանոնավորված են: Բոլորն ուրախ են: Այս օրը մեզ համար տոն է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 141. Հետևյալ նախադասություններն արտահայտեցեք սխեմաներով:


Ամառը վերջացավ: Բոլոր դպրոցները բացվեցին: Աշխատանքներն սկսվեցին: Աշակերտները զրնում են դպրոց: Գերազանցիկ աշակերտներն ամեն ու պատրաստում են իրենց դասերը:

Բանվորներն աշխատում են հարվածայնորեն: Ուսուցիչները գնացին հեռավոր եքսկուրսիայի: Վարպետները նորոգում են մեր քաղաքի մայրքերը: Պիտենքները գնում են ճամբար:


Որինակ՝ 1) ամառը վերջացավ



2) Բոլոր դպրոցները բացվեցին



3) Աշակերտները գնում են դպրոց



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 142. Հետևյալ բառերը դործածելով վորսին ենթակա գտեր համապատասխան ստորոգյալներ և կազմեցեք նախադասություններ: Ստորոգյալներին ավելացրեք միմի լրացում:

Վորմնագիր, դերձակ, բժիշկ, ուսուցիչ, աշակերտ, հյուան, հացթուխ, դարբին:

ՅՈՒՅՄՈՒՆՔ.— Կարգում ե, թխում ե, կարում ե, կառուցում ե, կոփում ե, սովորում ե, ավանդում ե:

Որինակ՝ Ուսուցիչն ավանդում ե դասը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 143. Հետևյալ ստորոգյալներին համար դրտեք համապատասխան յենթականեր, կազմեցեք նախադասություններ և յենթականերին ավելացրեք միմի լրացում:

. . . ծաղկում են . . . բացվում են . . . հասունանում են . . . աշխատում են . . . հնձում են . . . սովորում են: . . .

ՅՈՒՅՄՈՒՄ.— Կոլանտեսականները, բանվորները, ուսուցիչները, աշակերտները, վարդերը, ծաղիկները:

Որինակ՝ Գույնզգույն ծաղիկները ծաղկում են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 144. Կարգացեք հետևյալ նախադասությունները և ասացեք նրանց տարբերությունները:

Սուրիկը գնաց դպրոց: Սուրիկը գնաց դպրոց: Սուրիկը գնաց դպրոց: Յերանի թե Սուրիկը դպրոց գնար:

Այս ձևերով արտահայտեցեք հետևյալ նախադասությունները.

Գրիշան աշխատում ե: Սաշան սովորում ե իր դասերը: Յերվանդը նկարում ե: Սարգիսը գրում ե: Ռոզան նվագում ե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 145. Արտագրեցեք և կետերի տեղը դնելով յենթականեր՝ կազմեցեք նախադասություններ:

. . . և Սեդան յերգում են: . . . ու Գոհարը գրում են: . . . և Լուսիկը կարգում են . . . և Եմման նվագում են: . . . և Ամալիան պատմում են:

Որինակ՝ Վիկտորիան և Սեդան յերգում են, և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 146. Արտադրեցեք հետևյալ նախադասու-
թյունները և կետերի փոխարեն մեկական ստորոգյալ ել դուք
ավելացրեք:

Լեվոնը կարգում է և . . . : Յերվանդը յերգում
է և . . . : Գրիգորը պատմում է և . . . : Ռուբիկը
նկարում է և . . . : Գեղամը յերգում է և . . . :
Սեդան խաղում է և . . . :

Որինակ՝ Լեվոնը կարգում է և գրում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 147. Արտադրեցեք հետևյալ նախադասու-
թյունները և յենթականերին միմի լրացում ել դուք ավելացրեք:

- . . . և սպիտակ ծողիկները բուրում են:
- . . . և հոտավետ վարդերը բացվել են:
- . . . և կանաչ ծառերը բողբոջում են:

Որինակ՝ Գեղեցիկ և սպիտակ ծաղիկները բու-
րում են:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 148. Արտադրեցեք հետևյալ նախադասու-
թյունները և ստորոգյալներին մեկական լրացում ել դուք ավե-
լացրեք:

Յողն իջնում է ծաղիկների և . . . վրա: Գե-
տերը թափվում են լճերն ու . . . : Մարդիկ
թռչում են անբոպլանով ու . . . ով: Մենք ճա-
նապարհորդում ենք յերկաթուղով և . . . ով:
Մշակերտները գրում են գրիչով ու . . . ով:
Փայտահատը ծառը կտրում է սղոցով ու . . . ով:

Որինակ՝ Յողն իջնում է ծաղիկների և տերե-
ւերի վրա:

17. ԲԱՐԴ Ե ԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պարզ նախադասություն
Արևը ծագեց: Բոլորը
զարթնեցին:

Ընկերս ձուկ եր վոր-
սում: Յես հավա-
քում եյի ծաղիկներ:
Նրանք հնձում էյին:
Մենք կապում ե-
յինք:

Այսոր դպրոց չգնացի:
Այսոր հիվանդ եյի:
Յերեկ գրում էյի: Այ-
սոր կարգում եմ:

Բարդ նախադասություն
Արևը ծագեց և բոլորը
զարթնեցին:

Ընկերս ձուկ եր վորսում,
իսկ յես հավաքում էյի
ծաղիկներ:
Նրանք հնձում էյին, իսկ
մենք կապում էյինք:

Այսոր դպրոց չգնացի, վո-
րովհետև հիվանդ եյի:
Յերեկ գրում էյի, բայց
այսոր կարգում եմ:

Նախադասությունները լինում են պարզ և բարդ:
Պարզ կոչվում են այն նախադասությունները, վորոնք
ունեն մեկ յենթակա, մեկ ստորոգյալ և մի միայն են
արտահայտում: Պարզ նախադասություններն իրար
հետ միանալով՝ կազմում են բարդ նախադասություն-
ներ: Բարդ կոչվում են այն նախադասությունները,
վորոնք ունեն մեկից ավելի յենթակա և ստորոգյալ:
Բարդ նախադասություն կազմող պարզ նախադասու-
թյուններն իրար հետ միանում են շաղկապներով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 149. Հետևյալ պարզ նախադասություննե-
րից յերկուական նախադասություններ իրար հետ միացնելով՝
կազմեցեք բարդ նախադասություններ:

Գայժակը փայլատանկեց: Ամպրոպը պայթեց: Անձրեր վերջացաւ: Ծառերը զեռ չեն ծաղկել: Կարգադրութիւն յեղաւ: Նրանք շարժվեցին: Գարունը յեկաւ: Ծաղիկները բացվեցին: Յետ ցանկանում էյի գնալ: Արդեն ուշ էր: Զանգը հնչեցրին: Յերեխաները գնացին դպրոց: Վորսորդները գայլ տեսան: Դայլին սպանել չհաջողվեց: Մեզ ձիեր տրամադրեցին: Մենք մեկնեցինք:


ՄԻ ՔԱՆԻ ՅԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծառեր, ծաղիկներ և վառներ բողբոջում են: Մարգագետնում արածում են ձիեր, յեզներ և հորքեր: Պեճիկը, Սուրիկը, Յերվանդը, Ռուբիկը, Ասումը և Կորյունը միրգ էյին հավաքում: Խնձորենի, ցանձենի, բալենի և ընկուզենի կանաչել են:


Նախագասության մեջ կարող են լինել մի քանի յենթականեր: Այսպիսի նախագասություններ կարգալիս յենթակաները մեկը մյուսից անջատվում են փոքրիկ ընդհատումներով, վորոնք գրության մեջ արտահայտվում են ստորակետներով:

Յեթե վերջին յենթակայից առաջ և, ու շաղկապներ կան, ստորակետներ չեն դրվում, իսկ յեթե այդ շաղկապները կրկնվում են բոլոր յենթակաների հետ, այն ժամանակ նրանք իրենց վրա կրում են շեշտ և յերկրորդ յենթակայից սկսած ստորակետներով անջատվում են:

Սուրիկը և Գրիշան կարդում են



Սուրիկը, Գրիշան և Յերվանդը կարդում են.



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 150. Հետևյալ նախագասություններն արտագրելիս ընդգծեցեք յենթակաները և դրեցեք ստորակետներ, ուր վոր հարկավոր է:

Զաբելը Յողիկը Քնարիկը և Արևհատը գրում են: Ակումբում տրվում են ներկայացումներ զեկուցումներ դասախոսություններ և կինոնկարներ: Մեր գործարաններում շինվում են կոմբայներ տրակտորներ տանկեր ավտոմոբիլներ և աերոպլաններ:


Կասպից ծովը թափվում են և՛ Ուրալը և՛ Վոլգան և՛ Թերեքը և՛ Քուռը և՛ Արազը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, 151 Արտագրելիս յենթականերն ընդգծեցեք մի գծով, իսկ ստորոգյալները՝ յերկու գծով:


Սուրբիկը կարգում է, գրում է և նկարում է: Դերձակը չափում է, կտրում է, կարում է և սլափափում է: Գրիշան վեր կացավ, հագնվեց, լվացվեց, թեյեց և գնաց դպրոց:

Նախագաստ. թյան մեջ կարող են լինել մի քանի ստորոգյալներ: Այսպիսի նախագաստ. թյուններ կարգալիս ստոր. գյալները մեկը մյուսից անջատվում են փոքրիկ ընդհատումներով, վորոնք գրության մեջ արտահայտվում են ստորակետներով: Յեթե վերջին ստորոգյալից առաջ և, ու չաղկապներ կան, ստորակետներ չեն դրվում, իսկ յեթե աջո չաղկապները կրկնվում են բոլոր ստորոգյալներից առաջ, այն ժամանակ իրեն; վրա շեշտ են ընդունում և անջատվում ստորակետով:

Կոմբայնը հնձում և մանրում է




Որինակ՝ կոմբայնը հնձում, մանրում և զտում է




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 152. Հետևյալ նախագաստ. թյունները սխեմաների վերածեցեք:

Յերվանդը հագնվեց, պատրաստվեց և գնաց թատրոն: Վորմնադիրը տաշում է, հղկում է և շարում է պատերը: Հյուանը չափում է, կտրում է, տաշում է, ծակում է և շինում է նստարաններ: Փոթորիկը բարձրացավ, մրրկեց և սրկեց դարավոր կաղնին: Կոտնաեսակներ և՛ վարում է, և՛ ցանում է, և՛ քաղում է, և՛ մանրում է:


Որինակ՝ կարմիր կապույտ և սպիտակ ծաղիկ-
ները ծաղկեցին:




Կարմիր, կապույտ, սպիտակ և դեղին ծաղիկ-
ները ծաղկեցին



Ցողը շողշողում է խոտերի և ծաղիկների վրա.



Ցողը շողշողում է խոտերի, ծաղիկների և
տերևների վրա:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 153. Արտագրեցեք և ընդգծեցեք միևնույն հարցին պատասխանող լրացումները, դրեք կետադրության նշանները:

Մենք ստացանք գիրք տետրակ գրիչ թանաք ռետին և մատիտ Կոլտնտեսությունն ստացավ ցորեն գարի հաճար ծխախոտ և բամբակ Նրանք աշխատում էյին մուրճով կացնով լոմով ուրագով և սղոցով Յես դիմեցի Սուրիկին Վահեյին Արամին և Գագիկին Մենք սովորում ենք դպրոցում ակումբում թատրոնում կինոյում և համալսարանում Հարվածայիններն իրենց աշխատանքը կատարեցին լավ մաքուր և գեղեցիկ Ձյունի շերտը ծածկել ելեռները դաշտերը և հովիտները

Նախագասության մեջ միևնույն ստորոգյալ ունեցող մի քանի լենթակաները կամ միևնույն յենթակա ունեցող մի քանի ստորոգյալները և միևնույն հարցին պատասխանող մի քանի լրացումները, այսինքն՝ նախագասության մեջ միևնույն պաշտոն կատարողները կոչվում են նախագասության միասնեռ կամ բազմակի անդամներ:

Բազմակի անդամները կարող են կապվել և, ու, թե, կամ շաղկապներով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 154. Արտագրեցեք շարունակեցեք թվարկումը:

Անտառում աճում են յեղենիններ, սոսիներ . . .
Կոլտնտեսությունում կան տրակտորներ, ավտոներ . . .
Դպրոցի համար գնեցին տետրակներ, գրքեր և . . .

Դպրոցում կարդում են, գրում են . . .
Կարի գործարանում չափում են, կտրում են .
Վորմնագիրը տաշում ե, հղկում ե . . .
Անտառում ապրում են՝ գայլերը, աղվեսները . . .
Տաք յերկիրներ չվում են ծիծեռնակներ, սարյակներ . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 155. Արտագրեցեք ընդգծեցեք բազմակի անդամները և դրեք կետադրության նշանները:

Խորհրդային Միության մեջ մարդիկ աշխատում են վոչ թե կապիտալիստների համար այլ իրենց համար Նա գրեց թե պատմվածքներ թե վոտանավորներ և թե վեպեր Նա գրեց վոչ թե պոեմներ այլ պիեսներ Յես յեղա անտառում դաշտում և հովիտներում Յես յեղա վոչ թե դաշտում և հովիտներում այլ անտառում Յես գրում եմ ու աշխատում եմ Յես վոչ թե գրում եմ այլ աշխատում եմ Նա յերգում ու պարում ե Դու գրում կամ նկարում ես Դու թե գրում թե նկարում ես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 156. Լրացրեք հետևյալ բարդ նախագասությունները:

Փոթորիկը բարձրացավ և ծովը . . .
Բոլորը գնալու յեն, իսկ Սուրենը . . .
Բոլորը խոսեցին, սակայն Դրիշան . . .
Ուզում էյի գնալ, բայց . . .
Յես աշխատում եմ, իսկ դու . . .
Դու գալու յես ինձ հետ կամ . . .
Դու ուզում էյիր գալ, ապա . . .
Մեր պլանները կատարված են, ուրեմն . . .
Յես կարդալու յեմ, վորպեսզի . . .

Յեա գնալու յեմ դպրոց, փորովհետեւ
 Նա աշխատում ե անընդհատ, փոր
 Նա իր պանը կկատարի, յեթե
 Սուրբին իր աշխատանքները վերջացրել ե թե
 Յեա գնում եմ թատրոն, մինչդեռ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 157. Հետևյալ հատվածից շոկեցեք բարդ և պարզ նախադասությունները և գրեցեք առանձին սյունակներում: Բարդ նախադասություններն իրարից անջատելով՝ կադմեցեք պարզ նախադասություններ:

Քարվանի ծայրը սարերը հասավ,
 Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.
 Վրան-վրանի հետևից բաավ
 Ծաղիկների մեջ գույն-գույն սիրավետ.
 Ալաչուխ դագա, անվերջ վրաններ,
 Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
 Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
 Հենվում են մեկ-մեկ բարձր քարափին:
 Գուգարք սարերի սիգավետ լանջին
 Բազմել են հայի, թուրքի բինաներ,
 Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
 Դեռ յերերում են ուղտի քարվաններ,
 Խրխնջում ե ձին, կովը բառաչում,
 Բոլորն ել իրանց յուրդն են ճանաչում.
 Մայում ե անուշ ամլիկը գառան
 Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

(Վ. Միրախան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 158 Ինքներդ կադմեցեք 4 բարդ նախադասություններ, փորոնք միացված լինեն և, ու, իսկ, բայց, ուրեմն, վոր, վորովհետեւ, վորպեսզի, սակայն, յեթե շաղկապներով:

18. ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՐԻՇԻ ԽՈՍՔԻ ՀԵՏ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 159. Հետևյալ հոդվածից շոկեցեք և արտագրեցեք ուրիշի ասած խոսքերը:

Յերեկ մեր դիրեկտորը հայտարարեց. «Վաղը սանիտարական որ ե, բոլոր աշակերտները պիտի մասնակցեն աշխատանքներին»: Իրեկտորն ասում եր. «Մեր սանիտարական որվա աշխատանքները տեւելու յեն առավոտյան ժամը 7-ից մինչև յերեկոյան ժամը 5-ը: Այդ ժամանակվա ընթացքում պիտի մաքրվի թե դպրոցի շենքը և թե ամբողջ բակը»:

Վարդգեսը պարծենալով դիրեկտորին հայտնեց. «Մենք մեր աշխատանքները վերջացրինք ճիշտ ժամանակին և շատ հաջող կերպով»: Նա ասում եր. «Աշխատանքը մեզ համար պարծանք ե, և մենք սիրով կկատարենք մեր բոլոր պարտականությունները»:

Այն նախադասությունը, փոր ասվում ե ուրիշի կողմից և բանավոր խոսակցության կամ գրավոր ժամանակ մեջ ե բերվում խոսողի կամ գրողի կողմից, կոչվում ե ուրիշի խոսք:

Յերբ ուրիշի խոսքը մեջ ե բերվում բառացիորեն, անփոփոխ կերպով, կոչվում ե ուրիշի ուղղակի խոսք, իսկ յերբ մեջ ե բերվում միայն բովանդակությունը, բայց փոչ ասողի բառերով կոչվում ե ուրիշի անուղղակի խոսք:

Ուղղակի խոսքն առնվում ե չափերտների մեջ, իսկ անուղղակի խոսքն անջատվում ե բուլթով կամ ստորակետով և չափերտների մեջ չի առնվում:

Ուղղաւոր խոսքը հեղինակի խոսքից անջատվում է միջակետով, բութով, գծով կամ ստորակետով:

Յեթե ուղղակի խոսքը հեղինակի խոսքից հետո չէ դրված, նրանից առաջ դրվում է միջակետ, իսկ ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ. որինակ՝ Լենինն ասում է. «Ով չի աշխատի, նա չի ուտի»:

Յեթե ուղղակի խոսքը հեղինակի խոսքից առաջ է դրված, նրանից հետո դրվում է ստորակետ և գիծ. որինակ՝ «Ով չի աշխատի, նա չի ուտի», — ասում եր Լենինը:

Յեթե հեղինակի խոսքն ընկած է ուղղակի խոսքի մեջտեղ, ապա հեղինակի խոսքից թե առաջ և թե վերջը դրվում է ստորակետ և գիծ. որինակ՝ «Ով չի աշխատի, — ասում եր Լենինը, — նա չի ուտի»:

Յերբ ուղղակի խոսքը հարցական կամ բացականչական է, նրանից հետո դրվում է գիծ: Որինակ՝ «Ո՞վ է» — ասում եր պահակը: «Կանգնիր, մի շարժվիր» — հրամայեց միլիցիոները:

Յերբ ուրիշի խոսքը կարճ է՝ անջատվում է բութով և չակերտների մեջ չի առնվում. որինակ՝ նա ասաց՝ յես չեմ գալու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 160. Հետևյալ որինակներն արտագրելիս այնպես դասավորեք, վոր հեղինակի խոսքերն ընկնեն ուղղակի խոսքերի մեջտեղը կամ նրանցից հետո. վորտեղ վոր հարկավոր է, կարող եք հեղինակի խոսքի բառերի մեջ տեղափոխութուններ կատարել:

Ուսուցիչը հայտարարեց. «Ով վոր խնդիրները շուտ լուծի, կարող է զուրս գնալ»: Գործարանի դիրեկտորն ասաց. «Հայտարարված է ստախանովի կանամիս, բոլորն միանալիս ուժերով պիտի աշ-

խատենք իրագործել մեր պլանները»: Մեր բրիգադիրը հայտարարեց. «Համաձայն մեր սոցմրցման պայմանագրի, մինչև ամսիս 25-ը պիտի վերջացնենք գարնանացանը»: Այնտեղ մեկը կանգնած կանչում է՝ «Յեկեք, շուտ յեկեք, ուշանում եք, աշխատանքն արդեն սկսվել է»: Միլիցիոները հարցրեց՝ Ո՞վ է գալիս»: Մեքենավարը հայտարարեց. «Այսօր յես սահմանելու յեմ ստախանովական ռեկորդ»: Մեր ռազմագիտության դասատուն ասաց՝ «Վաղը բոլորս գնալու յենք լագեր»:

* * *

— Ո՞վ է:

— Յես եմ, Սուրբիկ, դուռը բաց:

— Դուք ո՞վ եք, յես ձեզ չեմ ճանաչում:

— Յես Յերվանդն եմ, Սուրբիկ, ձեր դասընկերը:

— Վճիր Յերվանդն ես, այս գիշերով ի՞նչ ես ուզում:

— Լենինականից եմ յեկել, ուշ յեկանք, դրա համար յեկել եմ ձեզ մոտ գիշերելու:

Խոսակիցների իրար փոխարինող ուղիղ խոսքերը յերբ նոր սողից են սկսվում, անջատվում են գծով, վոր կոչվում է անջատման գիծ:

Ուղղակի խոսք

Սուրենն ասաց «Յես չեմ կարող գալ»:

Դիրեկտորը հայտարարեց. «Վաղը մեր պարապմունքներն սկսվելու յեն»:

Ուսմասվարը մեր ուսուցչին ասաց. «Գնացեք և ձեր դասարանը կարգի բերեք»:

Անուղղակի խոսք

Սուրենն ասաց, վոր ինքը չի կարող գալ:

Դիրեկտորը հայտարարեց, վոր վաղը մեր պարապմունքներն սկսվելու յեն:

Ուսմասվարը մեր ուսուցչին ասաց, վոր գնա և իր դասարանը կարգի բերի:

Ուրիշի ուղղակի խոսքն անուղղակի խոսքի վերածելու համար ջնջվում են 1) չակերտները կամ գծերը, 2) առաջին և յերկրորդ դեմքերը փոխվում են յերրորդ դեմքի, 3) ուղղակի խոսքից առաջ ավելացվում է վոր կամ քե շաղկապը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 161. Հետևյալ ուղղակի խոսքերը վերածեցեք անուղղակի խոսքերի:

Միլիցիոները կանչեց. «Քաղաքացի, մայթով անցիր»: Կոնդուկտորը կանչում է. «Բոլոր քաղաքացիները պետք է տոմս վերցնեն և ապա առաջ անցնեն»:

Այսոր քաղխորհրդի կողմից հայտարարված էր. «Տազնապի ժամանակ բոլոր քաղաքացիները պարտավոր են անմիջապես ազատել տրամվայը»:

Քաղաքացիներից մեկը կարգալով այդ հայտարարությունը՝ կոնդուկտորին հարցրեց. «Ի՞նչ նպատակով ե տրված այդ հայտարարությունը»: Նա պատասխանեց. «Տազնապի ժամանակ տրամվայում մնալը նույնքան վտանգավոր է, քան մի բացոթյա վայրում»:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 162. Հետևյալ հոգվածից ջոկեցեք ուղղակի խոսքերը և վերածեցեք անուղղակի խոսքերի:

Խոսում են Կորյունը և Գեվորգն իրենց ընկեր Լեվոնի մասին.

— Կորյուն, ուր ե Լեվոնը:

— Լեվոնը գնաց քննություն տալու:

— Բայց յես գիտեմ, վոր նա քննություն չլավեց, վորովհետև ուսուցիչն այնտեղ չեր:

— Նա հաջողությամբ քննություն կտա: Այս քանի որը չափազանց լուրջ կերպով աշխատում ե:

— Անցյալ որը շատ եր հուսահատված, բայց իզուր, նա պատրաստված է, և յես վստահ եմ, վոր նա չի կտրվելու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 163. Հետևյալ հատվածի անշատման գծերի փոխարեն դնել խոսողների անունները:

— Բարև, ախպեր,— ձայն է տալիս Պետին:

— Ա՛յ բարին արեդ,— պատասխանում է Չատին:

— Ե՛, վո՞րտեղից ե ուր:

— Չորագեղից եմ գալիս, ընկույզ եմ տանում ծախելու: Իսկ դու վո՞րտեղից ես գալիս, բարեկամ:

— Յես, ախպեր ջան, Ղչաղից եմ գալիս, բուրդ եմ տանում ծախելու:

— Հը՞, բուրդս լավն եր:

— Բաս ընկույզս ի՞նչով եր պակաս,— պատասխանեց Չատին:

— Յես այնպես եյի կարծում, թե միայն յես եմ աչքաբաց. բանից դուրս ե գալիս, մեր տղա, դու ել ինձնից պակաս շնորհքով չես յեղեր:

— Ա՛յ տնաշեն, շնորհքը վոր բաժանում եյին, կարծում եյիր թե մենակ դու եյիր այնտեղ:

— Դեհ, վոր այդպես ե, արի ախպերանանք:

— Աչքիս վրա:

— Գիտես՞ ինչ, արի միասին մի գործ անենք:

(Ըստ «Լուսաբեր» ի)

19. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծութուն ըստ խոսքի մասերի

Հինգ նոր և գեղեցիկ ավտոմոբիլներ արագորեն սլանում են դեպի գեղածածաղ Ծաղկաձորը:

Հինգ — քանակական թվական:

Նոր — վորակական ածական:

Ծաղ — շողկապ:

Գեղեցիկ — ածական:

Ավտոմոբիլներ — հասարակ գոյական, հոգնակի ուղղական հոլով:

Արագորեն — ձև ցույց տվող մակբայ:

Սլանում են — ըստ, ներկ ժամանակ, հոգնակի թիվ, 3-րդ դեմք:

Դեպի — կապ:

Գեղածածաղ — ածական:

Ծաղկաձորը — հատուկ գոյական անուն, հայցական հոլով, յեղակի թիվ:

Նախադասութունն ըստ խոսքի մասերի վերլուծելիս բառերը վերցվում են հերթական կարգով և նրանց գիծաց գրվում, թե վոր տեսակի խոսքի մաս է ու ի՞նչ փոփոխութուններ է կրել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. 164. Հետևյալ նախադասութունները վերլուծեցեք ըստ խոսքի մասերի:

Մեր կոլանտեսության առաջին բրիգադիրը 4 հարվածային ընկերների հետ այսօր գերակատարեցին պլանները:

Մեր դպրոցի աշակերտները և ուսուցիչները հանձն են առել տարին փակել առանց թույլերի:

Մեր դպրոցի տարեվերջի քնություններն արդեն սկսվել են:

Այս տարի աշխատանքներն ավելի լավ են կազմակերպված:

Մեր ավարտական դասարանի աշակերտները քննություններից հետո գնալու յեն հեռավոր եքսկուրսիա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 165. Հետևյալ նախադասութունները վերլուծեցեք ըստ նախադասության անդամների:

Հինգ նոր և գեղեցիկ ավտոմոբիլներ արագորեն սլանում են դեպի Ծաղկաձոր:

Ավտոմոբիլներ — յենթակա:


Սլանում են — ստորոգյալ:

Հինգ, նոր և գեղեցիկ — յենթակայի լրացումներ:

Արագորեն, դեպի Ծաղկաձոր — ստորոգյալի լրացումներ:

Նախադասութունն ըստ անդամների վերլուծելիս. 1. ո՞վ. ի՞նչ հարցերով գտնում ենք յենթական. 2. ի՞նչ է անում, ի՞նչ է լինում հարցերով գտնում ենք ստորոգյալը. 3. հետո գտնում ենք յենթակայի լրացումները և 4. գտնում ենք ստորոգյալի լրացումները:

Յեթե տրված է մի նախադասութուն, վոր ունի յենթակա, ստորոգյալ, յենթակայի լրացում, և ստորոգյալի լրացում, ստացվում է հետեվյալ սխեման:





ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 166. Հետևյալ նախադասությունները վերլուծել ըստ նախադասության անդամների և կազմել նրանց սխեմաները:

Մեր կոլանտեսության պարտեզի գեղեցիկ վարդերը պարզաբեցին հերոս ողաչունների պանծալի կրճերը:

Վիթխարի արակտորները հերկում են կոլանտեսության լայնատարած դաշտերը:

Այսօր մեր բրիգադը սոցմրցման մեջ մտավ մեր կոլանտեսության յերկրորդ բրիգադի հետ: Մենք արդեն վերջացրինք մեզ տված զարնանացանի պլանը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 167. Հետևյալ համը սխեմաների համաձայն կազմեցեք նախադասություններ:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 168. Հետևյալ նախադասությունները վերլուծել թե ըստ խոսքի մասերի և թե ըստ նախադասության անդամների: Նախքան վերլուծման անցնելը, պետք է վորոշել պարզ և բարդ նախադասությունները:

Ամեն տեղ յեռում ե գարնան վերածնող շնչի ուժն ու զորությունը (Ն. Դ.): Յեվ մի խորունկ զայրույթ, վառվող կատաղություն բռնկվում եր մի ժամանակ մեծ, առատ տան զալակների սրտի մեջ (Փափ.):

Այնտեղ տիրում են անսովոր շարժում ու իրարանցում (Շիրվ.):

Հեր ու վորդի նստած եյին բազազ Արտեմի խոհանոցում:

Են ժամանակ բազազն ու իր կինը վիճում եյին ներսը:

Տիկին Նատոն չեր համոզվում: Նա արտասովորով անիծում եր իր բախտը:

Ես ազմուկի վրա տիկինը դուրս յեկավ

...ազգը Գիքորին ձեն տվեց:

Թմթմփայնելով Գիքորը ներս մտավ:

(Հ. Թումանյան):

Յե՛վ դինամիտն անտառում առվոռայան վորոտաց,
Սանթրոսի տան քարաշեն պատերն ահով դողացին:
Տանձենու տակ թափառող արջը փախավ չորեքթաթ:
«Ե՛լ ա՛ն չկա» մուտաց փայտ հավաքող գյուղացին:
Ու վեր թռան մարմարի մանր—սպիտակ կտորներ,
Ողում թափով պարեցին ու շաղ յեկան չորս բոլոր:
Արձագանգը դղրդաց ու սլացավ սարնիվեր,
Անտառում իր հաղթական արշավանքը յերգելով:
Արձագանգը դղրդաց ու սլացավ սարեսար,
Հասավ խոժոռ ձորերին, քարափներին արևոտ,
Ու մոտակա գյուղերին յերգի նման խանդավառ
Հաղորդեց նոր մի կյանքի աղմկալից առավոտ:

(Ն. Զարյան):

Աշունն ել յեկավ Գուգարք աշխարհում,
Սարին ու դաշտին այլ կյանք ե յեռում:
Սուգելով գառան, փոշխարի բուրդը,
Գոչել ե բինեն, թողնելով յուրդը:
Լեռներից զվարթ գիրացած հոտեր
Զմեռվան համար իջել են դաշտեր:
Յուրդերը դադարի սևին են տալիս,
Աղբյուր ու ծաղիկ վողբում են, լալիս:
Մենակ խաղում ե, թռչկոտում պախրան,
Սարեր ու ձորեր մնացին նրան:
Արծիփն ել տխուր նստած ժայռերին՝
Վորսեր ե փնտրում իր սոված փորին:

(Վ. Միրսյան):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 169. Հետևյալ հատվածներից ջոկեցե՛ք
նախադասություններ և վերլուծեցե՛ք ըստ անդամների և ըստ
խոսքի մասերի:

Արևը չեղած՝ սարվորն արթնացավ,
Նորից ձորերում աղմուկ բարձրացավ,
Նորից սայլի տակ ճրռում ե ճամփան,
Փռվելու հարսի քողն ու զաթիլուն:
Հովիվ, հովվուհի նստոտած շարքով
Կթում են ուրախ և անհոգ խնդում,
Յերբեմն ել այլված անուշիկ յերգով
Սեր են վարթեցնում մեկ-մեկի սրտում:
Վերջացավ արդեն փոշխարի կիթր,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը:
Մեկն ել գդակը շարժելով ողում,
Դեռ գառնարածին՝ «հեյ, յեկ» ե կանչում:
Յերկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հոտը յերևաց:
Խառնվելով նրանք մայրերի հոտին,
Բերկրանքի հույզով մայում են ցրված:
Կանչում են, բայում գառն ու մաքին,
Անուշ ձայներով փնտրում են միմյանց:
Վորը գտնելով իրա գառնուհին,
Ծծել ե տալիս, փայելով սրտանց,
Վորը խաղում ե մոր հետ կուշտ փորով,
Վորն ել մնում ե տխուր մայելով:
Յե՛վ ամեն անգամ գառը մեր տալիս
Կարծես թե անուշ համերգ են տալիս:
Յե՛վ շուտ ջոկելով մայրերը գառնից,
Հովիվը քչեց նրանց դեպ արոտ,

Մահակն ել ուսին գառները բինից
Տարավ գառնարած սառն աղբյուրի մոտ:
(Վ. Միրմյան)

Յելան, բերին մեծ գութանի
Խոփը դրին թեժ կրակին,
Ու կաս-կարմիր, կեծկրծալի,
Շիկնած ալվին մերկ թիկունքին:

— Ո՛ք, ել հանգիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից,
Աչքը բացավ հրսկան հանդարտ,
Ուզում եր յետ քընել նորից,

Տեսավ՝ Դավթին: Գլուխն ասեղ
Վեր բարձրացրեց մըռնչալով,
Փըչեց վըրեն, վոր թըռցընի
Են աժդըհին մի փչելով:

Տեսավ, տեղից ժաժ չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին,
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չե, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հեռը խոսեց.
(Հ. Թ.)

Այնտեղ, Սև ջրի չքնաղ յեղերքներին եր, վոր
ապրում եր Հասոն:

Յերկրի սիրուն և քաջ պատանին եր նա: Վոչ մի
մարդ նրան չեր կարող զինաթափ անել: Ավազակը
սիրտ չունեի նրա հոտի շուրջը ման գալ և վոչ իսկ

գայլը վոչխարի կողքին քարշ գալ: Հասոն վորքան
բարի յեր դեպի լավը, այնքան ել անգուլթ եր դե-
պի չարը:
(Վ. Փափազյան)

Ինչպիսի հերոս ընկերներ մեռան,—
Մեռան՝ չկորան...

Կրակն եր ցայտում նրանց աչք-ուներից,

Շանթը՝ շրթուներից,
Յերբ խոսում եյին ծով ամբոխի մեջ

Վիշտ ու կարիքից.

Վրեժի, ցասման հրով բորբոքված
Նրանք բեմ յելան,

Յեվ բեմը դարձավ արյունով ներկված
Զոհերի սեղան:

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան...
(Հ. Հակոբյան)

Պոեա, դու հպարտ սեզ արծվի նման
Բարձրից մի նայիր տգետ ամբոխին.
Յեվ կծու յերգով մի ծաղրիր նրան,
Շանթեր մի թափիր խղճուկի գլխին:

Ինչո՞վ ե, առա, ամբոխն հանցավոր,
Վոր խորթ են նրան քո հոգու ձայներ.
Դու վարդ ես յերգում, պոեա բախտավոր,
Յերբ նրա կյանքին պատած են փշեր...
(Ա. Մանուկյան)

Իմ հայրենիքն ունի անգին
Դյուցազուններ, վորոնց կրծքին
Շքանշանն է վառվում
Յեվ մեր դեմքին ժպիտ փռում:
Ցնծությունով յերկիր թնդաց,
Վարդեր իջան նրանց գլխին (Հ. Շիրազ)

Գ ր Վ ու մ Ե Գ

աղորդ	զուգորդել	հինգերորդ
արձակուրդ	թակարդ	հորդա
ահագնազորդ	խանուրդ	հորդառատ
անրնդհատ	խարդախ	հորդորել
ափելորդ	խարդավանք	հորդորանք
արդ	խլուրդ	հորեղբորորդի
արդարև	խնդիր	հորեհ
արդի	խնդրառուծյուն	հորեհաշիշ
արդեն	խնդրել	հարդարել
արդյոք	խնդրարկու	ճանապարհորդ
արդյունք	խորանարդ	ճլորդի
արդուկ	խորդուբորդ	մակարդակ
բարդ	խորհրդածուծյուն	մակարդել
բարդուծյուն	խորհրդական	ժարդատյաց
բարդացնել	խորհրդանիշ	մեջընդմեջ
բերդ	խորհրդավոր	մերթընդմերթ
բերդապահ	ծաղկնազարդ	միլիարդ
բրդել	կարդալ	միջնորդ
զդալ	կոկորդ	բիլիարդ
զդակ	կախարդ	մնացորդ
զնորդ	կցորդ	յերդիկ
լերդ	հազուրդ	յերդմնազանց
լյարդ	հակառակուրդ	յերդում
լիմոնադ	հաջորդ	յերբորդ
լծորդ	հաջորդել	յերկրորդ
դղրդյուն	հարդ	յերեկորդ
դարդ	հանդերձ	յերկտասարդ
զարդարանք	հետնորդ	

Գ ր Վ ու մ Ե Գ

նախամարդ	ուշադրություն	տասներորդ
նախանձախնդիր	չորրորդ	տղամարդ
նախդիր	պակասորդ	Տրդատ
նախորդ	շարդել	փոխանորդ
Նավասարդ	սարդ	քանիեորդ
նավորդ	սպրդել	քանորդ
լողորդ	վաղորդյան	քառորդ
նյարդ	վաղորդ	քինախնդիր
նամարդ	վարդ	քսաներորդ
շահախնդիր	վարդենի	բուրդ
շոկուղ	վարդան	միջնորդ
շոխնդ	վարդանուշ	
ողանցք	վարդուհի	
ողաչու	վրեժխնդիր	
ողավորություն	վեցերորդ	
ողերեկութա-	վորդ	
բանություն	վորդի	

Գ ր Վ ու մ Ե Գ

ահագին	եզուց	կենտրոնաձիգ
Ավագ	զուգընթաց	հանգչել
արձագանգ	թորգում	հեռաձիգ
արտակարգ	լինգ	հոգս
Բագու	ծագել	հոգալ
Բագրատ	ծեգ	հոգաբարձու
բարդավաճ	կարագ	հոգեառ
բարենորոգում	կարգ	հոգեբանություն
Գարեգին	կարգին	հոգեբուդիս
Գեվորդ	կարգադրել	հոգեպարար
զասակարգ	կարգապահ	հոգի

Գ ր վ ու մ ե Գ

հոգնակի	մարագ	որակարգ
հոգնել	Մարգարիտ	ուղղածիգ
հրածիգ	մուգ	պարերգ
հրծիգ	հետաձգել	Սարգիս
ձագ	յերգ	սուգ
ձագար	յերգեցիկ	սպունգ
ձգել	նորոգել	սրինգ
ձգտել	շոգ	վարագույր
ձգձգել	ոգուտ	վոգի
ձիգ	ոգնել	վոռոգել
ճրագ	ոգտավետ	

Գ ր վ ու մ ե Ղ

աղբ	գաղտագողի	կուղբ
աղբակույտ	գաղտնապահ	հղիանալ
աղյուս	գաղտնի	ձաղկել
աղբյուր	գողտուկ	մեղք
աղջատել	գղրղյուն	մեղսակից
աղջամուղջ	գողգոջ	յեղբայր
աղջուր	ղղջալ	յեղկելի
աղտ	թուղթ	նողկանք
աղտոտ	թղթակցել	նողկալի
աղքատ	թղթապանակ	շղթա
բաղդատել	խեղդել	շաղգամ
բաղկանալ	խեղճ	պաղպաջել
բողկ	խղճալ	պղպեղ
բաղձանք	կաղկանձել	պղտոր
գաղթ	կողք	պղպջակ
գաղջ	հեղձ	վողբ

Գ ր վ ու մ ե Ղ

վողբերգություն	տաղտկալի	քաղհան
վողջ	փղձկալ	քաղցր
վողջույն	փողպատ	քաղց
տաղտուկ	փողփողել	

Գ ր վ ու մ ե Ձ

արձան	բարձր	հատափարձ
արձակուրդ	բարձրաբերձ	հեղձուկ
արձակ	գանձ	հնձան
աղանձ	զեղձ	հնձել
փորձանք	զարձ	հորձանք
դարձ	զարձյալ	հուձնձ
անդրադարձ	զարձվածք	մաղձ
անձկալի	զեղձ	մանկաբարձ
անձնավորու-	զեղձանիկ	մղձավանջ
թյուն	դերձակ	նախանձ
անձնատուր	զերձան	շնչահեղձ
անձնուրաց	Համբարձում	ոձ
անձանձիր	ընդարձակ	ոձիք
անձուկ	ընձենի	պղինձ
հանձնել	ընձեռնել	սինձ
առաձգական	թանձր	սանձ
ատաղձ	ինձ	սանձարձակ
բաղձանք	յորձ	վարձ
բաղձալ	խանձարուր	վարձկալ
բացարձակ	խանձել	վարձկալ
բարձել	խուրձ	վարձահատույց
բրինձ	հանդերձ	վեբամբարձ
ընձյուղ	հանդերձարան	վեհանձն
բարձ	հանդերձյալ	տարեղարձ

Գ ր Վ ու մ Ե Ձ

ա յ ծ ե ղ շ ու ը	զ ի ջ ե լ	մ ի ջ ա ի
ա ղ ջ ա մ ու ղ ջ	զ ղ ջ ա լ	մ ի ջ ա զ փ ա յ ի ն
ա ղ ջ ի կ	ը ն դ ա ո ա ջ	մ ի ջ ա կ ե տ
ան խ ո ն ջ	ը ն դ մ ի ջ ե լ	մ ի ջ ա մ տ ե լ
ան ու ը ջ	թ ը ջ ե լ	մ ի ջ ա ն կ յ ա լ
ան ջ ա տ	թ ը թ ն ջ ու կ	մ ի ջ ա ն ց ք
ա ջ	ժ ը ա ջ ա ն	մ ի ջ ա վ ա յ ը
ա ջ ա կ ց ե լ	ի ջ կ ա ն	մ ի ջ ա տ
ա ջ ա կ ո ղ մ յ ա ն	ի ջ ն ե լ	մ ի ջ ա ը կ ու թ յ ու լ ն
ա ո ա ջ	ի վ ե ը ջ ո	մ ի ջ ի
ա ո ա ջ ա գ ն ա ց	լ ա ն ջ	մ ի ջ ն ա ղ ե պ
ա ո ա ջ ա ղ ե մ	լ ա ն ջ ա պ ա ն ա կ	մ ի ջ ն ա կ
ա ո ա ջ ա ղ ը ու թ յ ու լ ն	լ ու ը ջ	մ ի ջ ո ը ե յ ա կ ա ն
ա ո ա ջ ա պ ա հ	խ խ ու լ ն ջ	մ ի ջ ո ը յ ա
ա ո ա ջ ա ը կ	խ ո խ ո ը յ ու լ ն	մ ի ջ ու կ
ա ո ա ի կ ա	խ ը թ ի ն ջ	մ ղ ձ ա վ ա ն ջ
ա ո ա ջ ի ն	խ ա ը ջ	մ շ տ ն ջ ե ն ա կ ա ն
ա ո ա ջ ու ց	կ ա մ ու ը ջ	մ ու լ ն ջ
ա ո ե ջ ք	հ ա ջ ե լ	մ ը մ ն ջ ա լ
ա ո ջ ի	հ ա ջ ո ղ	մ ը ջ յ ու լ ն
ա ը ջ	հ ո ը ջ ո ը ջ ե լ	յ ե ղ ե ջ
ա ը ջ ա ո	հ ո ը ա ն ջ ե լ	յ ե ղ ջ ե ը ու
ա ը ջ ա ս պ	հ ը շ ե ջ	յ ե ղ ջ ու ը
բ ն ա ջ ի ն ջ	մ ա ը ջ ա ն	յ ե ը ջ ա ն ի կ
գ ա ղ ջ	մ ի ջ ո ց	յ ե ը ի ն ջ
գ ե ջ	մ ե ջ ը ն դ մ ե ջ	ն ա հ ա ն ջ
գ ո ղ ղ ո ջ	մ ե ջ	ն ա ը թ ն ջ
ե ջ	մ ե ջ ք	ն ի ն ջ
ե ջ ք	մ ե ջ ա ե ղ	շ ի ղ ջ

Գ ր Վ ու մ Ե Ձ

շ շ ու լ ն ջ	վ ե ը ջ ա բ ա ն	վ ը ն ջ ու լ ն
շ ու ը ջ	վ ե ը ջ ա լ ու յ ա	տ ը տ ու լ ն ջ
ո ը ը ն դ մ ե ջ	վ ե ը ջ ա կ ե տ	փ ու լ ն ջ
շ ղ ջ ի յ	վ ե ը ջ ի վ ե ը ջ ո	բ ա ջ
պ ա հ ա ն ջ	վ ո ղ ջ	ք ա ջ ու թ յ ու լ ն
ս տ ե ը ջ	վ ո ղ ջ ա գ ու ը բ ա ն ք	ք ա ջ ք ը
վ ա յ ը ե ջ ք	վ ո ղ ջ ա կ ե գ	ք ը ք ի ջ
վ ե ը ջ	վ ո ը ջ	

Գ ր Վ ու մ Ե Բ

Ա ը դ ա ը	Թ մ բ կ ա հ ա ը	ն ե ը բ ո ղ
ա ը բ ա ն յ ա կ	ի ն ը ն ա բ ե ը ա բ ա ը	ն ե ը բ ա ն
ա ը բ ե ց ու թ յ ու լ ն	խ ա բ ե բ ա	շ ա բ ա թ
ա ը բ ու լ ն ք	խ ա բ ե լ	ու ը բ ա թ
բ ո ը բ	խ ա բ ե յ ու լ թ յ ու լ ն	պ ա տ ա հ ա բ ա ը
Գ ա ը ը թ ի ե լ	խ ա բ ու ս ի կ	ս ու ը բ
գ ը ա բ ա ը	հ ա մ բ ե ը ե լ	ս ը բ ա գ ո ը ծ ե լ
գ ա ը ը թ ն	հ ա մ բ ու յ ը	ս ը բ ա գ ը ե լ
ը ն բ շ ա մ ա ը տ	մ տ ա խ ա բ ու	ս ը բ ե լ
թ ա մ բ	թ յ ու լ ն	ս ը բ ի ջ
թ ա մ բ ե լ	յ ե ը ե ս ս ը բ ի ջ	վ ո ը բ

Յ Ա Ն Կ

1. Անձնական զերանուներ	3
2. Բայ	10
3. Բայի ժխտական ձևը	26
4. Բայի հրամայական ձևը	29
5. Բայի անորոշ ձևը	33
6. Թվական	38
7. Մակբայ	44
8. Կապ	49
9. Շաղկապ	53
10. Ձայնարկութիւն	56
11. Կոչական	58
12. Հնչյունափոխութիւն	61
13. Բառակազմութիւն	66
14. Ուղղագրական վարժութիւններ	74
15. Բառըրքուկից ոգտվելու վարժութիւն	82
16. Պարզ նախադասութիւն	83
17. Բարդ նախադասութիւն	87
18. Տարրական և զործնական ծանոթութիւն ուրիշի խօսքի հետ	97
19. Նախադասութիւն վերլուծութիւն	102
20. Վարժութիւնների համար	107
21. Բառացանկ	110

Պատ. խմբագիր՝ Ա. Ղարիբջան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրել՝ Գար. Հակոբյան

Գրավիտի լիազոր՝ Ղ. 3712 Հրատ. № 4655

Պատվեր 507 Տիբաժ 40000

Հանձնված է արտադրութեան 28 մայիսի 1938թ.

Մատրագրված է տպագրութեան համար 30 հունիսի 1938թ.

Պահպանել 1 տպարան, Յերևան, Լենինի 65

30

ՀՀ Ազգային գրադարան



NL0977639

ԳԻՆԸ 75 Կ.
ԿԱԶՄԸ 50 Կ.

400

11

28545

Т. ШАХБАЗЯН
Армянский язык
Грамматика и правописание
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.